

**Ա Մ Ս Ա Գ Ի Ր**


**ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ,  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**



**ԵՐԿՈՏԱՍԱՆ ԵՐՈՐԴ ՏԱՐԻ**

**1877**

**ՓԵՏՐՎԱՐ**




**ՄԶԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ՍՈՂՈՄՈՆԻ)**

**ՅԵՐՈՒՍԱՂԻՄ**

**Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ**





ԹՅԱՍԱՆԵՐՈՒՄԻՍՏԵՐԻ  
ԹԻՒ 2.

ԱՄՍԱԳԻՐ

ՓԵՏՐՎԱՐ 28  
1877.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ  
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԸՆԴՏՐՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

ԱՄԵՆ գիրք կամ հեղինակութիւն որք բաղում արնութեամբ և մեծ խղճամով հետախոյզ երկասիրաց պատրաստուելով՝ աղբաց և տոհմատարակ ընդհանուր մարդկութեան կ'աւանդուին Աստուծոյ խաղաղութեան հրաշք շնորհիւ, ամենքն ալ ունին մի բարի և գովելի նպատակ, այն է իւր սրբանշիւքն իւր պարունակութեամբ գաղափար տալ հետամուտ ընթերցասիրին, լուսաւորել նորա մտքը, բարձրացունել նորա հոգին, զօրացնել նորա գաղաղութիւնը, փափկացունել նորա սիրտը և ազնուացնել զգացումը

ԺԲ

ները, միով բանիւ նպատակել և ծգտակար ծառայութիւն մը մատուցանել ամեն այն հետաքննին ընթերցասիրաց՝ որք ըղձակաթ հետամուտ են իրենց գաղափարը ընդարձակելու և միտքը լուսաւորելու յայտնեալ ճշմարտութեանց և սկզբանց հմտութեամբ:

Ուսումներն ու գիտութիւններն լրտ որում զանազան ծիւղերու և մասանց կը բաժնուին՝ որոց իւրաքանչիւրն եւս իրենց առանձին հետեւողն ու սիրահարը ունի, այս պատճառաւ հեղինակութիւնք կամ երկասիրութիւնք եւս զանազան ծիւղերու և մասերու



կը բաժնուին, որոց խւրաքանչիւրն իւր երկասիրի որ և է առարկայի վրայ ունեցած առանձին հմտութիւնը և յատուկ գաղափարը կը պարունակէ. ոչ միայն այսչափ այլ և ուսմանց որ և է մի առանձին ճիւղն եւս որովհետեւ ունի իւր բաղմամբիւ հետեւողն, հետեւաբար մի և նոյն ճիւղի վրայ իսկ կը լինին շատ գրուածներ և հրատարակութիւններ այլ և այլ անձերէ, որոց խւրաքանչիւրն նոյնպէս մի և նոյն առարկայի վրայ իրենց հեղինակաց տարբեր մտածութիւններն ու դատողութիւններն կը բովանդակեն, որք շատ անգամ ալ իրարու բոլորովին ներհակ լինելով, անհմուտ ընթերցողի առջեւ մեծ դժուարութիւն կը յարուցանեն չիտթելով նորա դատողութիւնը ուղիղը թիւրէն կամ ստոյգը անտուգէն որոշելու:

Ահա այս պատճառներով՝ բանասէր ընթերցողն նախ իւր չորաստանջ աշխատութիւնը՝ ի դուր չը վտանդու եւ երկրորդ իւր անհմտութեամբը թիւր գաղափարաց մէջ չը մտնուելու համար իւր սկզբնաւորութեան ատեն կը պարտաւորի երկու ընտրութիւն ընել խնամով և ուշադրութեամբ. նախ իւր սրտի յատուկ վտառքանայ և իւր անձի մասնաւոր ձրից ուշ գնելու է թէ ուսմանց որ ճիւղին վրայ աւելի սէր և յարմարութիւն ունի. երկրորդ՝ թէ ո՞ր հեղինակներն իրենց խորին հմտութեամբ հասուն գատողութեամբ և արժանի վարկովն ուսումնական աշխարհի մեծամասնութենէն ընդունելութիւն և համակրութիւն գտած են. ուսումնասինգիր ընթերցասէրն այս ընտրութիւնները խնամով և ուշադրութեամբ կատարելէն զինի, եթէ ունենայ հաստատուն կամք եւ յարատեւ աշխատութիւն, կրնայ կանխաւ ապահով լինիլ ապագայի մէջ իւր ունենա-

լիք յառաջագիմութեան և ըզձից պըսակուելուն վրայ:

Այսպէս ուրեմն, խոհական ընթերցասիրին ընտրութեան և հետեւողութեան այս ջանքն ու եռանդն է՝ որ օգտակար կ'ընէ իրեն այն հեղինակութեանց երկոց եւ հրատարակութեանց ընթերցումը, որով վերահասու լինելով նա՝ նոցա յայտնած սկզբանց և ճշմարտութեանց՝ կը լուսաւորի մտքը, կը զարգանայ հոգւով և կը փայլի հանճարով: Անհատական ջանից և հետեւողութեանց այս եռանդն է նաեւ որ հետզհետէ բարգելով եւ բաղմամբատկելով ներհուն և հմուտ անհատից թիւր կ'ընդհանրայնէ և կը ծաւալէ հասարակութեան մէջ բնական, բարոյական և իմաստասիրական վարդապետութեանց լոյսն ու ճշմարտութիւնը. ուստի կը ծագի ազգային կամ ընդհանրական յառաջագիմութիւն եւ քաղաքակրթութիւն, որով կը հասնին իրենց նպատակին և կը պըսակուին այն բարեմիտ և մարդասէր հեղինակներն որք բազում չարչարանօք և բաղմադիմի վշտակրութեամբ իրենց գտած սկզբունքներն ու ճշմարտութիւնները անշահասէր ոգւով հասարակութեան նուիրելու վեհանձնութիւնը կ'ունենան:

Աշխարհի բոլոր հեղինակութիւնները կամ գիրքերը ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու մասի կամ ճիւղի, մին բարոյական որ կը ծառայէ զարգացման և կատարելագործութեան հոգւոյն, իսկ երկրորդն՝ նիւթական որ կը ծառայէ մտոց մշակութեան եւ մարմնոց հանգստութեան. որոց երկուսն եւս ունենալով իրենց առանձին եւ յատուկ օգուաններն ու շահերն՝ արժանի են մարդկային ազգի համակրութեան և հետեւողութեան. սակայն երբ նուրբ ուշադրութեան



առնուէք անոնց իւրաքանչիւրի տու  
մարդկային ազգն մատուցած հիմնա-  
կան եւ ընդհանրական օգտից աստի-  
ճանները, այն ատեն կը տեսնենք եւ  
անոնց իրարմէ ունեցած տարբերու-  
թեան աստիճանները, որոց զանազա-  
նութեան համեմատ եւս հարկ է որ  
մարդն ալ զանազանութիւն և կարգ-  
դնէ զանոնք ուսանելուն մէջ ըստ ան-  
միջական կարեւորութեան և ըստ օգ-  
տից տարբերութեան :

Այս տարբերութեան կարգը դրտ-  
նելու և սահմանը որոշուելու համար  
հարկ կը լինի նկատողութեան առնու-  
ն ուսումնասիրել մարդը իւր կազմա-  
կերպութեան ամբողջ մասունքներով :  
Մարդն ըստ որում գլխաւորապէս եր-  
կու մասունքէ կը բաղկանայ այն է՝ ի  
հոգւոյ և ի մարմնոյ, այն պատճա-  
ռաւ հարկ է նկատել նախ քան զամե-  
նայն երկու գլխաւոր մասանց միմեանց  
հետ ունեցած վերաբերութիւնը եւ  
կախումը, որովհետեւ ինչպէս կը տես-  
նենք միշտ մարդոյ կենդանութիւնը,  
որով կ'ապրի նա կը շարժի կը գործէ  
կը խորհի և մեծամեծ գործեր կը կա-  
տարէ, նոյնպէս տեսած ենք շատ ան-  
գամ նորա մեռելութիւնը որով ան-  
շարժութեան մատնուած մարմինը,  
ոչ մի բանի չունի յարմարութիւն եւ  
պիտանութիւն, ասկից կրնանք իմա-  
նալ որ մարմինը կենդանութեան եւ  
գործունէութեան մէջ գնողը հոգին է,  
մարդն հոգւով է որ կ'ապրի, հոգւով  
կը գործէ և հոգւով կ'զգայ, և որպէս  
զի մարդն իբրեւ կատարեալ մարդ ար-  
ժանապէս և ըստ օրինի ապրի և իւր  
պարտքն ու իրաւունքը ճանաչէ թէ  
առ Աստուած, թէ առ ընկերն և թէ  
առ անձն, պէտք ունի նախ քան զա-  
մենայն հոգւոյ կրթութեան և կատա-  
րելագործութեան, որ ուրիշ բանով  
չը լինիր բայց միայն բարոյական դաս-

տիարակութեամբ, որով զարգանալով  
մարդն սրտի, հոգւոյ եւ զգայմանց  
կատարելութեամբ՝ կրներկայանայ աչ-  
խարհի իբրեւ անվեհէր և մի ախոյ-  
եան, անձնուէր և անընկճելի ոչ մի  
գժուարութեան առջեւ, այս եղանա-  
կաւ ահա ճանաչելով մարդն իւր ան-  
ձը և իւր ընկերը և առ միմեանս ու-  
նեցած փոխադարձ պարտաւորու-  
թիւնները՝ այնուհետեւ կրսկի խղճի  
գիտակցութեամբ կատարել զանոնք և  
այս պարտականութեամբ ու սիրով  
միտնալով իւր նմանւոյն, իւր ընկերոջ  
եւ իւր եղբոր հետ՝ կ'երջանկացունէ  
զայն և կ'երջանկանայ, Այս է ահա  
մարդոյ կրթութեան և ճշմարիտ յա-  
ռաջագիմութեան էական, անմիջական  
և առաջին կէտը, առանց որոյ բոլ-  
րովին անօգուտ և ապարդիւն կը լինին  
ամեն գիտութիւնք և յառաջագիմու-  
թիւնք, քանզի ինչի՞ կը ծառայեն այն  
ամեն ուսմանց և գիտութեանց յա-  
ռաջ բերած մեծամեծ արդիւնքներն  
ու գիւրութիւնները, երբ անոնցմէ օ-  
գուտ քաղել և երջանկանալ չը գիտեր  
մարդն, ինչ օգուտ ունի շոգենաւուց  
և շոգեկառայ ճանապարհորդութեան  
համար մատուցած այն գիւրութիւն-  
ներն, երբ մարդն իւր հայրենեաց իւր  
բնակած տեղոյն մէջ անգամ իւր քա-  
ղաքացւոյ և ընկերակցաց հետ վար-  
ուելու մարդավայել եղանակը չը գի-  
տեր, ի՞նչ օգուտ ունի երբարակա-  
նութեան՝ հազորդակցութեան համար  
մատուցած այն հրաշալի արագու-  
թիւնն ու գիւրութիւնը՝ երբ մարդ  
նոյն ինքն իւր քով ներկայ գտնուող ան-  
ձանց և ընկերակցաց հետ հազորդակ-  
ցելու արժանաւայել կեքալը չը գիտեր,  
ինչ օգուտ ունի երկնային մարմնոյ, և  
երկրի ընդերք որպիսութիւնը քննե-  
լու գիտութիւնն ունենալ, քանի որ  
մարդ գեռ եւս իւր հոգին և սիրտը



քննելու գիտութիւնը չունի . այն գիտութիւններն , այն ուսումներն , այն յառաջագիմութիւններն և այն գիտութեան ինչ նշանակութիւն և ինչ արժէք ունին այն վայրերն ազգաց և ժողովրդաց համար . որոց հոգին զուրկ լինելով պարտուց և իրաւանց գիտութեան լոյսէն՝ իրենց համար չը կայ ոչ ընկերական , ոչ եղբայրական և ոչ ընտանեկան կենաց քաղցրութիւն , այլ իբրև վայրերն դաղաններ ամայի վայրերու մէջ վայրենաբար ծնանելով , վայրենաբար կ'ապրին և նոյն վայրենութեան մէջ կը մեռնին . իբրեւ բոյս մը որ անգէտ իւր էութեան և որպիսութեան , այսօր կը բուսնի վաղը կ'ապրի և ուրիշ օր մը խորշակահար լինելով ոչնչութեան կը մատնուի . վասն որոյ մարդն այն երկրորդական յառագիմութիւններէն արուեստական գիտութիւններէն օգուտ քաղելու հաճար պէտք է նախ բարոյական գիտութեան մէջ հոգւով զարգացած լինի , սբտով կը թուած և զգացմամբ ազնուացած լինի , որուն ՚ի սրտէ փափաքող ընթերցասէր անձն պէտք է ընտրէ իւր ընթերցասիրութեան իբրեւ առաջին պէտք՝ հեղինակութեանց այն ճիւղը որ կը վերաբերի բարոյական , իմաստասիրութեան կամ աւետարանական վարդապետութեան , և որ գրաւած է բազմութիւ և ստուար հաստրներ . քանզի մարդոյ բարոյական կըրթութեան այս ամենակարեւոր պէտքը նոյն իսկ հեթանոսութեան դարերու խորին խաւարին մէջ , Քրիստոսի ծնունդէն շատ ժամանակ յառաջ ոմանք զգոն եւ հանճարեղ մարդիկ զգալով աշխատած են խղճմտանաց ձայնին հետեւիլ եւ անոր առաջնորդութեամբ վարդապետել ժողովրդեան զգաստութիւն համեստութիւն և ժուժկալութիւն , որոյ՝ ատեն ատեն բաւական


ունկնդիրք եւ հետեւողք եւս զբռնուած են , սակայն ինչպէս որ առանց Աստուածորդւոյն Յիսուսի մարդկալութեան՝ անհնար էր մարդկային ազգի փրկութիւնն ու վերանորոգութիւնն այնպէս ալ անհնար եղաւ հեթանոսական խաւարին մէջ՝ մարդկանց առ հասարակ այն բարոյական վարդապետութեանց հետեւելը առանց յայտնութեան Յիսուսի Քրիստոսի բարոյական վարդապետութեանց . որ իբրեւ հեղեղ կ'ողողէր ամեն պատրաստուած եւ ընդունակ հոգի եւ արդաւանդ կ'առնէր . և ինչպէս Աստուածորդին Յիսուս իւր Աստուածային անհուն և անչափ սիրոյ զեղմամբ ամենամեծ ծառայութիւն մատուց բոլոր մարդկային ազգին առ հասարակ ՚ի հիմանէ՝ նորագելով գնոսա և վերականգնելով . որուն այնքան երկար դարեր ամեն մարդկային հեղինակութիւն անկարող գրաւուեցաւ , այսպէս ալ նորա Աստուածային վարդապետութեանց և բարոյական օրինաց աւանդապահ , նուիրական կտակն բարձր քան զամենայն հեղինակութիւնս մարդկային ազգի , օգտակար և արդիւնաւոր եղաւ մարդկութեան վերածննդեամբ քրիստոնեայ աշխարհին , որ իւր այսօրուան ունեցած յառաջագէժ եւ քաղաքակիրթ վիճակը կը պարտաւորի միմիայն այն Աստուածային օրինապոյն , որ Աստուածային անհուն իմաստութեամբ ամրապինդ կապած է մարդը մարդոյն հետ և սիրոյ Տրեղերական վարդապետութեան սիւղունքով բոլոր մարդկութիւնը մի մեծ գերդաստան ձուլած է :

Ահա այս ամենամեծ դերադանշութեանց պատճառաւ Աստուածորդւոյն Յիսուսի սոյն նուիրական կըրտակը , որ է Ս . Աւետարանն , իբրեւ միակ կանոն մարդկային ազգի թէ



նիւ թախան եւ թէ՛ բարոյական վիճա-  
կի բարեւոյնութեան հարկ եւ ան-  
հրաժեշտ է որ մարդկային ամենայն  
տիր հեղինակութեանց մէջ անգամ  
առաջին տեղը բռնէ եւ ամեն մարդոյ  
առաջին եւ հանապազօրեայ ուսումնա-  
սիրութեան առարկայ լինի . քանզի նա  
գիտութեան եւ իմաստութեան մի այն-  
պիսի անսպառ աղբիւր է , զոր մարդ  
որչափ ընթերցասիրէ այնչափ լոյս կը  
գտնէ . որչափ հետազօտէ այնչափ նոր  
իմաստներ կը տեսնէ եւ որչափ անով  
զբաղի այնչափ նոր գաղտնիքներով  
կը լուսաւորուի եւ բարոյական զարու-  
թեամբ կը կազդուրուի :

Գ . Ս . Շահանէան :



ՅԵՐԲ ԿԱՍ Ի ՔՈՒՆ ՏԷՐ ՄԵՐ ՏԷՐ

Ո՛հ Գար : Դ՛հ Բար :

ԳՕՈՆԷՅԷ .

Որդիք եմք Տէր լաօնից  
Հասեալք հովիտ սրգալից .  
Ըսպառեցան ոգիք մեր  
Ի յարհաւրացս անմբեր .  
Յերբ կաս 'ի քուն Տէր մեր Տէր .  
Ո՛հ կորնչեմք դառն յեպեր :

Աշիւներս 'ի լոյս մինչ փթթեցան օտարին՝  
Զըստրկութիւն նախ յունկըն մեր հընչեցին .  
Ընդ մայրենի անոյշ կաթին ըսպիտակ՝  
Զարուստը ըզլիւն ճաշակեցաք մեք ջրագ .  
Մատաղ տխրոյ թօշնեցան վարդ գարունք  
Կեղերձկան տրամահազրդք յողջ եւ սուգ :  
Յերբ կաս 'ի քուն Տէր մեր Տէր .  
Ո՛հ կորնչեմք դառն յեպեր :

Երբ Երեմի մեք կարգացաք երանիս .  
Ո զկողերաց կախեալ զուսեաց տամնաղիս .  
Յօղնաւորիւս յիշատախաւ Սաղմայ՝  
Ուղիտ արտասուաց հեղուր յաղիտ Եփրատայ .  
Իսկ մեր տրտում հեծե՛ծանացրս վեկայ՝  
Եւրոպ Ափրիկ եւ Ասիակ Ասիա .  
Յերբ կաս 'ի քուն Տէր մեր Տէր .  
Ո՛հ կորնչեմք դառն յեպեր :

Ոտիքս անգութ բարձեալ քքբիջ եւ ծիծաղ  
Վերայ պանդուխտ թշուառ գոյիս կենսանուաղ .  
Յանգ յիրերաց ճգնին աւաղ կորիւն զմեզ՝  
Յորտընդոտ ահա՛ զմարտից յատպարէդ .  
Եւ Հայկազանցրս կեանք եւ բաղդ մըթապատ՝  
Յաղթականին մեր դո՛ւ կառաց շուք եւ զարդ .  
Յերբ կաս 'ի քուն Տէր մեր Տէր .  
Ո՛հ կորնչեմք դառն յեպեր :

Պարկեշտ հարսանց ծանակեցան սրկապանք .  
Դեռամուսնաց մընացին լուծ եւ կապանք .  
Օղիք այծիք պաճաք եւ ինչք մեր համայն  
Յանագորոյն բըռանց յաւար մառնեցան .  
Եւ մեք հանգոյն սին սաղարթուց աշնայնի՝  
Ի դոյլն հոլմոյ 'ի գիւլ գըրիմք յերերի .  
Յերբ կաս 'ի քուն Տէր մեր Տէր .  
Ո՛հ կորնչեմք դառն յեպեր :

Հա 'ւանիկ Հիւսսի

Մարնէ ցասմալի .  
Ամպ եւ փոթորիկ  
Հետոյն են կընիք .  
Մըբըրիկ փայլակ  
Ճակատուն պըսակ .  
Որտամունք եւ ճայթ՝  
Յոտին իւր 'ի կայթ .  
Յաշացն հոտին թափ  
Կարկուտ եւ տարափ .  
Անմահ բարձրելոյն  
Թուէ զինքն հանգոյն .  
Ա՛րկ զաթուռ իւր մերձ  
Լերանց բարձրաբերձ .  
Գարշապարին զճոզ  
Լիճուն սիրտ 'ի դոզ  
Աղզըք եւ աղինք՝  
Պետք ծիրանածիք .  
Անձուկ իւր շաւղին  
Ատեանցըս ուղին .  
Սիրտ իւր անձկալրեաց՝  
Յօղս որոց սյրեաց .  
Լոկ ակտրժ քըմաց՝  
Արիւն արտասուաց :

Յերբ կաս 'ի քուն Տէր մեր Տէր .  
Ո՛հնչս առնէ քեզ դառն յեպեր :



Աստուած իմ մէջ քանի՜ հարուստ յառաջատ  
 Հեծեն ընդ մահ սիրեցելոյ՝ չարարատ .  
 Որքանի՜ մարք ըզմիամբն ողբան  
 Որոյ վառեալ այգուն 'ի գեղ կտրմերիւն  
 Ի հրազենուց որոտայիր 'ի բամբիւն  
 Հարաւ նք երկն 'ի ազով թաթաւ 'ի յարիւն .  
 Այսպէս ծաղկունք աստղափրթիթ կ'տրոնուցն  
 Թօթափելով մերկեն ըզնա 'ի գեղուն .  
 Զի միւնաբեր սառնամանիք սատկաշունչ  
 Թափի Հիւսիսէն փոթորկեցան մեծամուռնչ .  
 Տէրք կաս 'ի քուն Տէր մեր Տէր .  
 Ունչս առնեն քեզ դառն յեպեր :

Իսկ մինչ այսպէս գահք պետութիւնք ստանին .  
 Մայրիք բարձունք կործան յերկիր տապալին .  
 Յով հաստեցուք խարխուս յուսոյ անվերանգ՝  
 Մըրըկածուփ յովիկանաւ այս յարգանգ .  
 Թէ ոչ՝ 'ի Քեզ Հայր դու որոյց անտերունչ .  
 Ո զթշուառին լռեսս հառաչ լալամուռնչ :

Իրրու զեղէգ նրկնահասակ յանառախ .  
 Զոր 'ի գարուց հետէ տնկեաց աջք արի .  
 Մինչ յարկէ ուժգին հողմ .  
 Մերթ յայտ մերթ յայտ հակեալ կողմ .  
 Ընդ երկկոյս յողորմ բեկորս յաղթ մայրեաց՝  
 Մէք ճօճնացուք ճակատ փաղիւռն լուսաղբեաց .  
 Աւերածոյն եղեալ վեհայ բքնութեան  
 Եւ յորդաբուրիս յաւերթ գլխոյդ աստուածեան :

Որչէք եմք Տէր լալոնից .  
 Նստեալք հովիտ որդալից .  
 Ըստառեցան ոգիք մեր  
 Ի յարհաւրացս անմբեր .  
 Տէրք կաս 'ի քուն Տէր մեր Տէր .  
 Ո՛հ կորնչիմք դառն յեպեր :

1877  
 Յունւար 20

Աւետի (1) Կարապէտեան  
 Կ . Պալէշի  
 Աւա . Ժառ . Վարժարանի :

(1) Սոյն աշակերտը Վարժարանի ներկայ տար-  
 ւոյ հարցաքննութեան՝ իւր ընդհանուր և վերջա-  
 կան քննութիւնը տուաւ ամենայն յաջողակութեամբ  
 և իբրեւ փորձ Հայկաբանութեան գրած է այս քեր-  
 թուածը, որոյ նիւթը քննիչք նշանակեցին :

Տարեկան հարցաքննութիւն և Պարգևատրա-  
 խութեան հանդէս Ժառ . Վարժարանի Ս .  
 Արեւոյս :

Տարեկան հարցաքննութիւնք Ժառ .  
 Վարժարանի Յունւար 17-27 տեղի ու-  
 նեցան , ամեն օր ժամը 4 էն մինչեւ 8  
 'ի ներկայութեան Ամեն . Ս . Պատրի-  
 աքք Հօր , Տնօ . Ժողովոյ Գերա . Ան-  
 դամոյ և այլ եկեղեցական և աշխար-  
 հական ուսումնասէր անձանց :

Հարկ չեմք համարեր մանրամասն  
 գրել հարցաքննութեան առարկաներուն  
 և ուսանողաց պատասխանատուութեան  
 թեանց մասին , այլ կը բաւականա-  
 նամք միայն , ինչպէս ամեն տարի , Սի-  
 ծի վերջը դնել աշակերտաց տարեկան  
 աշխատասիրութեան և հարցաքննա-  
 կան պատասխանատուութեան միջին  
 արժէից , վարուց և մրցանակաց ցուցու-  
 կը , յորմէ կը յուսամք թէ հարցառէր  
 աղգայինք կարող են իրենց յանկացած  
 տեղեկութիւններն քաղել :

Իսկ պարգեւաբաշխութեան հան-  
 դէսը կատարուեցաւ Ս . Վարդանանց  
 անմահ յիշատակի տօնի օրը , ամսոյս  
 Յին : Հանդիսին մէջ կարդացուած ճա-  
 ուերէն հետեւեալը արժան կը դատիմք  
 ասա դնել :

## ԱՄԵՆԱՊԱՏԻԼ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԵՒ ԳԵՐՅԱՐԳՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Ձեր պատկառելի համախմբու-  
 թիւնը կը թելադրէ զիս այս ամբիւ-  
 նին վերայ բարձրանալ և մի քանի խօսք  
 արտասանել Աղգային հանդիսից եւ  
 սրբոյ Վարդանանց նահատակութեան  
 վերայ , ուստի Ձեր յօժար ունկնդրու-  
 թիւնը և ներողամտութիւնը կը հայ-  
 ցեմ :



Եթէ առ վայր մի ակնարկ մի ձը-  
գեմք մարդկային ազգի տարեգրու-  
թեանց վերայ, թափանցեմք նոցա գոր-  
ծոց և տրտմանց խորը՝ յայտ յանգի-  
ման պիտի տեսնեմք որ ամեն ազգ և  
ամեն տէրութիւն ունեցած է ընտիր  
ընտիր նահատակներ, քաջակորով եւ  
աննկուն անոյեաններ, հայրենասէր  
և անձնուէր մարտիիներ, որք 'ի սէր  
հայրենեաց, 'ի սէր կրօնի կամակար զի-  
մած են 'ի բանտ, 'ի կախաղան և 'ի  
մահ, վասն որոց նոցա յիշատակը պատ-  
ուելու եւ ապագայ սերունդի սրտին  
մէջ անջնջ պահպանելու համար սահ-  
մանուած են ազգային տօնախմբու-  
թիւններ, սահմանուած են զանազան  
հանգէսներ յորում առհասարակ, արք  
և կ'անայք, ծերունիք և մանկունք, ե-  
րիտասարդք եւ կուսանք 'ի մի վայր  
գումարուելով կ'ըմայլին 'ի մի շունչ և  
'ի հոգի այն վէհադանց անձնազոհու-  
թեան վերայ, կը հիանան նոցա եռան-  
դուն ազգասիրութեան վերայ, եւ  
կ'ուխ ուն սրտով և անկեղծ զգացմամբ  
նմանող լինիլ նոցա գործոց և օրինա-  
կին։ Այս վեհմ' նպատակաւ հաստա-  
տուած էին Յունաց ողիմպիական խա-  
ղերն և Հռովմայեցւոց թատերգու-  
թիւններն, որոց մէջ ունայն խրախճա-  
նութիւններ չէին կատարուէր, այլ կը  
վստէին և կարծարծէին մեծամեծաց  
և փոքունց սրտին մէջ հայրենասիրու-  
թեան և ազգասիրութեան փեմ' եւ  
անշնչանելի հուրն, որպէս զի 'ի պա-  
տահել հարկին դուրս բռնկեցնեն ըս-  
քանչելի կերպով եւ յայանսբարբառ  
քաղաքին իրենց սրտի և հոգւոյ մե-  
ծութիւնը։ Այս պատճառաւ հան-  
դէսներն այնչափ նուիրական էին որ  
մերթ ընդ մերթ նայն իսկ հիւսարատա-  
ներն, իշխաններն և վեհապահն դա-  
հսիւղներն Կոստոյնդնի վերայէն ծա-  
ռեր կ'արտասանէին 'ի լսելիս ժողովը-

դեան որով կը յու գէին ամենքը։ Եթէ  
չեմք սխալիր, այս իսկ էր պատճառն որ  
հայրենասիրութիւնը նոցա միակ ձիրքն  
և էական յատկանիշն դարձած էր, ու-  
րով 'ի մի շունչ և 'ի հոգի միշտ 'ի սէր  
հայրենեաց կը պարգէին կուրծքերնին  
թնամեաց սրբուն և նետերուն, կար-  
համարէին նոցա վատասրտութիւնը, կը  
կանգնէին ամբարտախ անկործանելի  
ընդդէմ երկպառակութեան և կը յա-  
րուցանէին իւրեանց ծոցէն բիւրաւոր  
անձնուէր դիւցազուններ, որոց քա-  
ջասրտութեան վերայ կը զարմանար  
համօրէն աշխարհ և կը սասանէին մի-  
ահեծան պետութիւնք։

Հայոց ազգն եւս քաջ ճանաչելով  
ազգային հանգիսց բազմադիմի օ-  
գուաններն՝ 'ի վաղուց անտի ընդունած  
է զայն իրեն համար իբրեւ առաջին  
և գլխաւոր պարտախտարութիւն, ու-  
րով ամբողջ ամէ հրձուելով կը տօնէ  
հայրենիքը պաշտպանող քաջերն, հօ-  
տը խնամող հովիւներն, կը վերանորոգէ  
նոցա անմոռաց յիշատակը, անդադար  
կը զրուտտէ իւր անձնազոհ և կամա-  
ւոր նահատակներն։ Այս ազգաշէն  
նպատակաւ է որ կը կատարէ ներկայ  
հանգէսն 'ի յիշատակ սրբոց Վարդա-  
նանց անմահ գործոց, կը կատարէ վա-  
յեղապէս՝ ըստ արժանւոյն պատուե-  
լով զանոնք իբրեւ զօրավիգ հայրենեաց  
և իբրեւ անոյեան եկեղեցւոյ։ Այս է  
բոլոր որդւոց Հայկազանց պարտաւո-  
րութիւնը և այս իսկ է նշան երախտա-  
գիտութեան, վասն զի Վարդանանք  
կենօք և մահուամբ փրկութեան աս-  
պար եւ ազատութեան ճանապարհ  
հանգիստցան մեզ, իւրեանց սիրա-  
գործութիւնը առաւել յարգ ըստա-  
ցաւ այնպիսի նեղ և անձուկ ժամա-  
նակի մը մէջ կատարուելուն համար։  
Որովհետեւ այն ինչ Արշակունեան խաբ-  
խուլ և կիսափորձան թագաւորութիւն



նոր յետ ընդ երկուր հոգեվարութեան  
իւր վերջին շունջն արձակեց, արդէն  
ստանեան սիգախորտոստ և չարասիրտ  
տիրապետներն սկսած էին գոռալով  
յաւեր և յապոկանութիւն դարձու-  
ցանել զՀոյաստան. քանզի, կործա-  
նել քողովքներն գիւղերն և տուններն,  
տապալել, պղծել, հրձիգ առնել զե-  
կեղեցիս: Հայաստանի առողջ զուակ-  
ները բազմութեամբ պարտական ան-  
յապ սրոյն ճարակ կը լինէին. միակ  
տրտառուքն և սողմնաղ մրմունջներն  
էին վտարանդի ժողովրդեան միոյթա-  
րութիւնը. չը կար կարեկցութիւն և  
չը կար գթութիւն: Գրգանաց և վապ-  
կութեանց մէջ սնուած մատաղ ման-  
կունքն և նորասի հարսուները խոտա-  
բուտ կը կերակրուէին. բաց ընդ նը-  
մին ունէին ակնկալութիւն, ունէին յոյս  
փրկութեան՝ այն է Աստուծոյ անբաւ-  
գթութիւնը ի կորեկցութիւն շարժել:  
Հեծեծանաց և աղօթից ձայները ժա-  
մանեցին բարձրելոյն Աթուր. հարկ էր  
որ Աստուծոյ Մատեաց բարձունքէն  
Ֆանէր Հայաստանի նոր Մովսէսը եւ  
արգարեւ եկաւ, հասաւ Հայաստանի  
ազատութեան վայրկեանը, ծագեցաւ  
Հայոց փրկութեան պաղպաղուն Արու-  
սեակը, ծագեցաւ Մամիկոնեան տա-  
նէն և առաջնորդեց անոնց անմահից  
կայանը: Տեսաւ նա իւր աղբին Յէփա-  
տական նոր գերութիւնը, տեսաւ նոր  
Փորաւոնին ամպարիշտ խառութիւն-  
ները, տեսաւ հայրենեաց աւերմունք-  
ներն և ժողովրդեան թլուառութիւնը,  
նախադարաց երկպառակութիւնները,  
զօրականաց լքումը, կանանց ճիւղ,  
մանկանց կրականումն, երիտասարդաց  
թուլութիւնը և ծերունեաց հառա-  
չանքները — տեսաւ այս ամենը, սիրտը  
յուզեցաւ, աղիքները դալարեցան,  
հպատակեցաւ Աստուծոյն կոչման  
փութաց, վերստին վառեց Հայոց առա-

մականաց սրտին մէջ հայրենասիրու-  
թեան և վրէժխնդրութեան առկա-  
ծեալ հուրն և ոգեւորեց զանոնք ազ-  
գու պերճախօսութեամբ, խոստու-  
սեց և խրախուսեցաւ. բարձրացոյց  
Մասիսի խոնարհած գլուխը, վերա-  
կանգնեց Հայոց անկեալ տունը ինքնին  
հիմն հանգիստանալով, ամուսնացոյց ու-  
րացեալներն և բարձրացոյց իւր համ-  
հարդից պատիւն: Այս ամենը չէին  
ամբերնոր Փարաւոնի բարացեալ սիր-  
տը, պէտք էր կոտորիչ հրեշտակ մի,  
որ անդրանկաճախ ստատակամբ սա-  
սանեցնէր սասանեաց սիրտն ու հոգին,  
Վարդան ինքն եղաւ այդ հրեշտակը.  
հանգոյն ճախրաւաց արձւոյ իւր քա-  
ջերով խոյսցաւ պատերազմի դաշտն,  
Տղմուտ գետոյ ափունքն, անգ յար-  
գարեց զամենեւեան ըստ կարգի և  
տակաւին մարտը չըսկած զօրք և զը-  
րականք վառեցան հոգւով և երկնա-  
ւոր նահատակութեան սիրով և ազա-  
ղակեցին միաբարբառ «Հաւատարեւ-  
ցի մահ մեր ընդ մահ արգարոյն եւ  
հեղումն արեան մերոյ ընդ արիւն Ս.  
մարտիրոսացն և հաճեցի Աստուծոյ  
ի կամաւոր պատարագս մեր, մի տա-  
ցէ զեկեղեցի իւր ի ձեռս հեթանոս-  
աց»: Արիաբար ճակատեցան ընդ-  
դէմանօրինաց աներկիւզ քաջութեամբ,  
դիմադրուեցին նոցա խառնիճաղանձ  
բազմութիւնը, թէպէտ չունէին պաշտ-  
պան, թէպէտ չունէին թագաւոր բաց  
յօրինացն Աստուծոյ, հարին, կոտո-  
րեցին, ջարդեցին քաջաբար, ցրուե-  
ցին, ջախջախեցին մոգականաց վէս-  
զլուխը, խոնարհեցուցին նոցա ամ  
բարտաւանութիւնը և այն ինչ հասան  
իրենց նպատակին, սաւառնաթեւ վե-  
րապայան յերկրէ յերկինս՝ առ սոն հար-  
կանելով աչս սրհի զաղիւր և վայրագորչ  
հրապուրանքները: Իւրեանց բոտրա-  
յին արեամբ պսակեցին զեկեղեցին Քը-



քիստոտի և ինքեանք պատկեցան ՚ի Քրիստոսէ, իւրեանց մահուամբ ազատութեան նեցուկ եղան ազգութեան և եկեղեցւոյ եւ նոցա շնորհիւ է որ ցարգ կանգուն կայ Հայութիւնն:

Ահա այս տեղ կ'երեւի Ս. Վարդանանց սիրազորութիւնը, փառքը և պարծանքը. այս տեղ կ'երեւի անոնց վեհանաձեռութիւնը, հայրենասիրութիւնը և կրօնասիրութիւնը: Առ ի՞նչ արդեօք թողին նոքա իրենց կանայքը, որդիքը, գերգաստանը, հայրենիքը և ՚ի մահ ընթացան. ո՞վ կը հարկադրէր զանոնք. ո՞վ կը տոխպէր — հայրենասիրութիւնը եւ կրօնասիրութեան սուրբ եւ արգար նախանձը, որ սաստիկ բորբոքած էր անոնց մէջ. — Զոհեցին երկրաւոր թագաւորին սէրն՝ երկնաւորի սիրոյն, երկրաւորին պարգեւները՝ երկնաւորին պարգեւաց, եւ թէպէտ մեռան մարմնով, բայց ազոտ մնացին հոգեով և իւրեանց անուներ անմահ թողին երկրի վերայ, վասն որոյ քանի որ կ'ապրին, լոյս կը տեսնեն Հայկաց որդիներն չք պիտի մոռանան նոցա յիշատակը:

Բայց արդեօք հա՞րկ է ըսել, Յարգելի հանգիստականք, որ լոկ տոնախումբութիւնը չ'ունի արժէք, չ'ունի օգուտ եթէ չը ջանամք գործով եւս անոնց նմանելու, վասն զի նմանողութեան մէջ է իսկոյան քաջութիւնը և հարազատ որդիութիւնը: Նորա այն պիտի տրհաւրայից և անձուկ ժամանակ մի տնտիկ և հատուտուն աշտարակայ նման անխախտ և անսասան մնացին իրենց հաւատոյ եւ ազգութեան մէջ. բարբարոսութեան տեղատարափ անձրեւները և հալածանաց կարկուտները չը կարացին խախտել անոնց խորամտ հիմն, ապալել անոնց հաւատը: Արդ պէ՞տք է ներկայ սերունդը, որ նախնեաց մի փոքրիկ մը

նացորդն է, խաղառ մոռնալով անոնց քաջութիւնը և կրօնասիրութիւնը իւր անձնական կրից գերի եղած առանց հալածանաց, առանց հողմոյ հուպ ընդ հուպ կործանի. հա՞րկ է որ փոխանակ իւր վէճքերն դարմանելու: փոխանակ՝ օտարաց կրօնամոլութեան դէմ մաքառելու, կամաւ նոցա կորրտաբեր գիրկն անկանի: Եթէ Պարսկական հալածանքները, Յունական դարաւոր նենգութիւնները, Հագարական հուրն ու սուրը, Հիւսիսականաց բարբարոս արշաւանքներն եւ Ղաախնաց ազգակուլ հետամտութիւններն չը կարացին յաղթել Հայութեան, ջնջել նորա անունն ու յիշատակը, աւանդ կը հասկածիմ որ անտարբերութիւնը պիտի ընէ ինչ որ դարբեր չը կարացին ընել:

Աւրեմն պէ՞տք է անտարբերութեան յաղթամբ ազգասիրութեամբ, խաւարին դէմ կռուիմք լուսով և գիտութեամբ, ջանամք նմանող լինիլ մեր քաջ գիւցազանց գործով և հոգեով. ջանամք մանել լուսաւորեալ ազգաց կարգը, որպէս զի սիրելի հանգիստանամք յաջ մարգկութեան և Աստուծոյ:

1877

Փետրւար 3

Մանուկ Զգոնեան

Զէյթունի

Ալա. Ժառ. Վարժարանի:



# ՄԱՐԴ

## ԱՐՏԱՔԻՆ ՄԱՐԴ

Բ. Կենդանական Ցատկութիւն Մարմնոյ.

(Շարունակութիւն, տես թիւ 1.)


Մարդը՝ ինչպէս նաեւ կենդանիք, այս առանձինն յատկութեամբ կը զանազանին Տնկերէ, վասն զի այսու կաբող են զիրենք չընապատող արտաքին առարկաներու վրայ զգացումն և ծանօթութիւն ունենալ և անոնց վերաբերութեամբ տարբեր գիրքեր ստանալ ինքնին շարժելով, որք տնկոց կը պակսին խստառ։ Կենդանական մասին գործողութիւններն գլխաւորաբար երկու տեսակ են՝ Շարժումն և Զգացումն, որոց վրայ առանձինն պէտք է խօսիմք։

### 1. Շարժումն.

Այս կարողութեամբ մարդը՝ իւր զգացմանց եւ պիտոյից համեմատ, մարմնոյն զանազան մասերուն ուղղութիւնը փոխելով անոնց տարբեր գիրքեր կը տայ և ինքզինքը տեղէ մ'ուրիշ տեղ կրնայ փոխադրել առանց արտաքին պատճառի մը կարօտութիւն ունենալու։ Շարժման գլխաւոր պատճառ մկունքներն են, որք մարմնոյն կարծր մասանց՝ ոսկերաց ծայրերը իրար կը կցեն և առաձգութեամբ կծկելով կամ թուլնալով զանոնք իրար կը մօտեցնեն կամ իրարմէ կը հեռացընեն, որով յառաջ կը գայ շարժումն այլ և այլ անգամոց կամ բովանդակ մարմնոյն վրայ։ Ուստի, ինչպէս կը տեսնուի, Շարժման գործարանը կը պարունակէ երկու առնչակից մասեր. մին Կողմ Ոսկերք կամ Կմախ, եւ միւսն Ներգործող Մկնուորնք։

1. — Ոսկերք կամ Կմախ. — Ոսկորները մարմնոյն մէջ գտնուած ձերմակ գունով կարծր մասերն են, որոց բովանդակութիւնը Կմախ կ'անուանի։ Ասանց մէջ երկու որոշ մասեր կը զանազանին՝ Գործարանական կամ Կենդանական մասն մածուցէ (gélatine) կազմուած, և անկենդան կամ հողային մասն՝ Բնածխային եւ Լուսածնային կրէ (phosphate de chaux, carbonate de chaux) կազմուած, որ առաջնոյն գրեթէ  $\frac{2}{3}$  մասն է։ Ի սկզբան՝ մանկութեան ժամանակ, ոսկերք աւելի կակուղ, դիւրակոր, աճառուտ և գրեթէ բովանդակ մածուցէ կ'ըլլան, բայց հետզհետէ քանի որ հասակն յառաջանայ, մածոցն նուազելով լուսածնատը կ'աւելնայ և ոսկերք կըստանան իրենց սովորական կարծրութիւնը։ Չափահաս մարդոց ոսկորային նիւթոց բաղադրութիւնն է՝ 33 մաս գործարանական նիւթ կամ մածոց, 53 մաս լուսածնատ կրոց, 12 մաս բնածխատ կրոց, 2 մաս եւս նատրոն, քլորուկ կրածնի և այլն։ Ոսկորները՝ իրենց ձեւոյն նկատմամբ երեք տեսակ են՝ երկայն, կարճ և տափարակ կամ լայն։ Երկայն ոսկորներն հասարակօրէն խողովակաձեւ և սնամէջ են, նուրբ եղով մը լցուած, որ Մո՛ծ Ոսկերաց (moelle des os) կը կոչուի։ Տափարակ ոսկորները՝ ծուծով առդուած և երկու բարակ և հոծ խաւերով պատուած ծակոտկէն հիւսկէնէ են։ Բոլոր ոսկորները ներգային թաղանթով մը պատուած են, որ Ոսկրաթիւն (périoste) կը կոչուի, և յօդուածոց վրայէն անցնելով ոսկերաց մէկէն 'ի միւսն կ'երկարիսոյն թաղանթին մէջէն ոսկերաց մէջ տարածուած արեան երակներով կը բերուին ոսկերաց աճման նիւթերը։ 'ի ներքուստ թաղանթ մի եւս կայ՝ ուղեղային լաղանի կոչուած, որ նոյնպէս





ԿՄԱԽԲ ՄԱՆԴՈՅ

1. Ճակատի ոսկր . — 2. Դագաթի ոսկր . — 3. Քնքի ոսկր . — 4. Ծործորակի  
 ոսկր . — 5. Մազակերպ ոսկր . — 6. Ցեսանեւեաց խոռոչք կամ Ակնակա-  
 պիճք . — 7. Հոտոտեւեաց խոռոչ . — 8. Վերի ծնօտ . — 9. Վարի ծնօտ . —  
 10. 10. Ողնայար . — 11. Պարանոցի սահման . — 12. Միջայ սահման . — 13.  
 Քամակի սահման . — 14. Լանջոսկր . — 15. 15. 15. 15. Կողեր . — 16. Կոնք .  
 — 17. 17. Սնրակ . — 18. Քամակի ոսկր . — 19. 19. Բազկոսկր . — 20. 20. Շա-  
 ռաւիղ ոսկր ծղեաց . — 21. 21. Արմկային ոսկր ծղեաց . — 22. 22. Դատտակ .  
 — 23. Մատնարմատք . — 24. 24. Մատուկ . — 25. 25. Զատոսկր . — 26. 26.  
 Նատատեղւոյ ոսկր . — 27. 27. Աղդեր ոսկր . — 28. 28. Մեծ Ուլք . — 29. 29.  
 Փոքր Ուլք . — 30. 30. Ներքին Կոճիկ . — 31. Արտաքին Կոճիկ . — 32. Կող-  
 փոյ . — 33. 33. Վերնաթաթ . — 34. 34. Երեսք Ոտից կամ Պաշտակերք . — 35.  
 35. Մատուկք Ոտից . — 36. Ծնդի յօդուած :



արեան երակները կ'ընդունին :

Ոսկերաց իրարու հետ միացման տեղերը Յօդոսածք կը կոչուին , որք եւրեք տեսակ են՝ Հասարակոսկ կամ Անշարժ , յորս ամենեւին շարժումն չկրնար տեղի ունենալ , ինչպէս են Գանկի ոսկերաց միացումն . Կիսաշարժ՝ որք միայն անորոշ շարժումն կ'ունենան , ինչպէս են ողնայարի օղակներն . եւ Շարժական կամ Աշարժ , որք զանազան ուղղութեամբ շարժիլ կը ներեն , ինչպէս են անդամոց եւ ուրիշ ոսկորներն : Այս յօդուածներն անանկ են որ մէկ ոսկորին ծայրը խորունկէկ ներս գացած եւ միւս ոսկորին ծայրն ալ քիչ մ'ուռած ըստ տմենայնի առջինին մէջ կը յարմարի կը մտնէ : Յօդուածներուն մէջ ոսկորին ծայրերէն միօրինակ պարարտ հիւթ մը կը վազէ , ու անով յօդուածներն աղէկ կը պահուին եւ թիւրաթեք կ'ըլլան :

Կամօքքը երեք մասի կը բաժնուի՝ Գլուի , Բուն եւ Անդամներ :

ԳԼՈՒԽԸ՝ Ողնայարի վերին ծայրը հաստատուած , երկու գլխաւոր մասերէ կը բաղկանայ՝ Գանկ , ոսկրային տուփ մի , յորում կը գտնուի լըլըլ , եւ Առաջ կամ Երես՝ այլ եւ այլ ոսկերաց խումբ մի , որոց կազմած խոռոչներուն մէջ կը գտնուին մասնաւոր զգայարանները : Գանկը ողնայարի շարունակութիւնն է եւ բնաբաններէն ոմանք կը նկատեն զայն ողներէ կազմուած , որք բացարձակ անշարժ կերպիւ յօդուած են միմեանց հետ . թէեւ ասոնց թըւոյն վրայ համաձայն չեն : Հինգ ոսկերք կը միանան Գանկը կազմելու համար՝ Ճակափի ոսկր ( frontale ) առաջակողմն գէպ 'ի վեր , Գագափի ոսկր ( pariétaux ) վերի երկու կողմերը մէյմէկ հատ , Ծոծորակի ոսկր ( occipital ) գանկին վարի կողմը գէպ 'ի ետեւ , Սփէնոյի ոսկր ( sphénoïde ) միւսներուն մէջտեղը

գէպ 'ի վար : Ուրիշ երեք ոսկորներ եւս մասամբ իւրք կը մասնակցին գանկի կողմնական մասերը կազմելու , բայց ասոնք աւելի երեսաց կը վերաբերին ինչպէս են Քնչի ոսկր ( temporaux ) աւանջաց առջեւի կողմերը մէյմէկ հատ , եւ Մաղիւրդ ոսկր մի ( éthmoïde ) հոտուտեւաց վերի կողմը : Այս ութն ոսկորները սղոճաձեւ եզրներով կը միանան , որք իւրք կ'ըսուին եւ բոլորովին անշարժ են :

Երես՝ առաջակողմն Գանկի վարի գին 14 ոսկորներէ կը կազմուին , որք են , Հոտափէլայ խոռոչ ( cavité nasale ) , Քմայ կամարը ( voûte palatine ) , Տեանիլայ խոռոչները կամ Այնակաղիճք ( orbites ) , Լալլայ խոռոչներ ( cavités auditives ) եւ ուրիշ մանր ոսկերք , որով գլխոյ բոլոր ոսկորները 22 հատ են :

ԲՈՒՆԻՆ մէջ են՝ Ողնայարը , Լանջոյրը , Կողերը նաեւ Կոնք , որ աւելի վարի անդամներուն իբրեւ հիմունք կը ծառայէ :

Ողնայարը մէջմէջանցած 33 օղակներէ կամ ողներէ կազմուած է , որ կամախից կամ բովանդակ մարմնոյն առանցք կը համարուի . օղակներու ծակերը մէկ ուղղութեան մէջ իրար համապատասխանելով անցք մը կը կազմեն , յորում կը գտնուի Ողնայարի ծոծը , որ մինչեւ Լըլըլ կը հասնի : Ողնայարը հինգ սահմաններու կը բաժնուի . Պարանոցի սահման ( région cervicale ) եօթն օղակներէ կազմուած . Թիլանց սահման ( région dorsale ) 12 օղակներէ կազմուած , որոց իւրաքանչիւրն կը կրէ զոգ մի կողեր . Միջաց սահման ( région lombaire ) 5 օղակներէ կազմուած . Գառակի սահման ( région sacrée ou sacrum ) 5 օղակներէ կազմուած , եւ Ծայրից սահման ( région coccygienne ou caudale ) 4 գրեթէ բոլորովին իրար կցուած փոքր օղակներէ կազմուած :



Լանջոսթեր (sternum) երկայն և տափարակ ոսկր մ'է, 7 իրար միացած մասերէ կազմուած և կրծոց առջևի կողմը հաստատուած, որուն հետ կը յօդուին կողերու ածառաւոր ծայրերն:

Կոլերը ոսկրային 12 զոյգ թիթեղներ են, որք Ողնայարի թիկանց սահմանէն արձակուելով և կոր ձեւով երկարելով ածառէ ծայրերով Լանջոսթորին հետ կը միանան և կուրծքի խռուոց կը կազմեն. բայց միայն 7 զոյգը լանջոսթորին կը միանան, եւ կ'ըսուին Հասարարուն կոլեր, 5 զոյգն, որք կիսով չափ երկարելով կը վերջանան, կ'ըսուին Եարծական կոլեր:

Կոնքը՝ Ողնայարի Գաւակի սահմանին շուրջը, որովայնի վարի դին է եւ Զատոսկերաց կոր ձեւով իրար միանալէն կը ձեւանայ:

ԱՆԴԱՄՆԵՐԸ չորս հատ են երկու՝ վերի անդամներ և երկու՝ վարի Անդամներ: Ասոնք ալ չորսական մասերէ կը բաղկանան, այն է, Ու (épaule), Բաշխ (bras), Մէն (avant-bras) և Զեռ (main) վերի անդամոց մէջ. Զապոսի (hanche), Ալտր (cuisse), Սրունք (jambe), և Ոք (ped) վարի անդամոց մէջ:

Ուսը երկու անկիւնակապ ոսկորներն են՝ Անուկ (clavicule) և Քամակի ոսկր (omoplate): Անրակը՝ առջևի կողմը երկար և բարակ ոսկր մ'է, որ մի ծայրով Լանջոսթորի վերի մասին հետ և միւսով՝ Քամակի ոսկորին հետ կը միանայ. Քամակի ոսկորը կողերուն ետեւը լայն, տափարակ և լեռանկիւնածէ, որ ետեւի դին դէպ ՚ի վեր դուրս ջրդուած և գալարուած մաս մ' ունի, որում կը կցուի Անրակի ծայրն:

Բաշխը խողովակածէ ջերկար ոսկոր մի միայն ունի (humérus) որ վերի գնտածէ եղունգն Քամակի ոսկորին հետ կը միանայ շարժական կերպիւ, իսկ վա-

րի եզրը երկու ուռեցքներով և երկու խոռոչներով կը վերջանայ:

Մէն և երկու երկարածէ ոսկորներէ կը բաղկանայ՝ Եռուիլ ոսկր (radius), որ կը կրէ ձեւքը և զայն դարձնելու կը ծառայէ, Արմիային ոսկր (cubitus), որ թեւը ծալելու ատեն բաղկի ոսկորին կողմը կիշնայ և իւր վերին ծայրի դուրս յցուած մասովն կ'արգիլէ զայն յետ կոյս ծռելու: Միջքն և բաղուկը իրար հետ կը յօդակցին շարժական կերպով:—

Զեռը ունի՝ Գասար (carpe), Ափ կամ Մասարմարք (métacarpe) և Մասունք (doigts): Գասարը՝ երկու կարգանկանոն կերպով շարուած 8 մանր ոսկորներէ կը բաղկանայ, որք թեթեւ շարժական են. Ափ՝ հինգ երկարածէ ոսկորներէ կը կազմուի, որք կ'երկարին դէպ ՚ի իւրաքանչիւր մասները. իսկ Մասունքն փոքրիկ ոսկորներով երեքական յօդուածներու կը բաժնուին, միայն բթմամար երկու յօդուածով է: Զեռքն ալ շարժական կերպիւ կը յօդակցի Միջեաց հետ:—

Զապոսիքն ունի վարի դին մարմնոյն երկու կողմերը մէյմէկ հատ են և կանքը՝ կը ձեւացնեն. ասոնք երեք իրար միացած կտորներէ կը կազմուին՝ Բուն Զապոսի (ilion) լայն և տափարակ, որ քամակին հետ կը կցուի. Յայլիլ ոսկր (pubis) առջևի կողմը դէպ ՚ի վեր, և Նապապիղոն ոսկր (ischion) յետկոյս ուղղուած օղակածէ ոսկր:

Ալտր ոսկորն (fémur) միակտուր և բոլոր ոսկերաց երկարագոյնն է. վերի գնտածէ ծայրովը Զատոսկերաց հետ կը կապուի շարժական կերպով. իսկ վարի ծայրը, ինչպէս բաղկինը, երկու ուռեցքներով վերջացած է:

Սրունքը՝ երկու երկարածէ ոսկորներով է՝ Մեծ Ուր (tibia) ներքսակողմը դէպ յառաջ, հաստ եւ ամուր է, որ



կր կրէ ամբողջ մարմնոյ ծանրութիւնը, Գրի Ուր (péroné) գրտի կողմը դէպ 'ի ետեւ աւելի նուրբ և տկար է. Մեծ Ուրքի ստորին ծայրը կը կազմէ ոտից ներքին իւճիկն (malléole interne), իսկ փոքր Ուրքին ստորին ծայրը կը կազմէ Արտաքին իւճիկը (malléole externe): Ազդեր և Սրունից յօդուածին վրայ կը գտնուի Կողմիցն (rotule), որ կտրկէ փոքր սակոր մ' է և կ'արգիլէ Սրունքը առջևի կողմը ծռելու: —

Վերջապէս Ուրքը ձեռաց նման կազմութիւն մ' ունի եւ երեք մասերէ կը բաղկանայ, Վերնախի (tarse), որ երկու կարգ անկանոն կերպիւ շարուած եօթն ոսկորներէ կը կազմուի, Երէս Ուրից կամ Պաշտիկ (métatarses) հինգ ոսկորներէ կը բաղկանայ, որք դէպ 'ի մատերը երկարած են. իսկ Մաքունք՝ հինգ հատ են և բաց 'ի բթամատէն, որ երկու յօդուածով է, երեքական յօդուածներ ունին:

Այս է մարդկային մարմնոյ կմախից նկարագիրն, յորում ընդ ամենը մեծ եւ փոքր 260 կտոր ոսկորներ կը գտնուին, թէ և քանի որ հասակն աճի, սոյն թիւը կը նուազի. վասն զի, անշարժ յօդակցութիւն ունեցող ոսկորներն հետզհետէ կարծրանալէ ըզկնի, մի կողմէն իրար կը կցուին և մէկ կտոր կ'ըլլան: Բոլոր կմախքը դեռ չընթացած՝ հաստորակ մեծութեամբ չափահաս մարդոյ վերայ, ամբողջ մարմնոյն երրորդ մասին մէկն է: Ինչպէս մարդոյ ուրիշ մասերը, այսպէս նաեւ ոսկորներն արեամբ կը սնանին ու կը մեծնան: —

2.—Մկանունք.—Ոսկորները՝ շարժումն կրող մասեր են. իսկ շարժումն առթողները Մկանունք են, որոց կծկելէն կամ երկարելէն՝ ոսկորները իրենց եւ մկանանց դրից համեմատ զանազան ուղղութեամբ կը շարժին:

Մկանունքը, որ մարմնոյն բոլոր ոսկորները կը պատեն, շատ բարակ եւ խիտ առ խիտ շարուած լարերէ կամ թելերէ կը կազմուին, որք Մանրաթիւ կը կոչուին: Մանրաթիւք տեղ տեղ ուղիղ գծով շարուած են, տեղ տեղ տարածուած եւ զանազան ուղղութեամբ, ըստ այսմ և Մկանունքը զանազան անուններ կը ստանան՝ Պարզ, Զառագայթայէ, Փեպայէ, և այլն: Ոմանց ալ ծայրերն իրարու մօտեցած և աւելի խտութեամբ միացած ձերմակ գունով կ'ըլլան, որք Զգանք կը կոչուին եւ կը ծառայեն Մկանունքը ոսկերաց հետ միացնելու: Մկանունք նաեւ իրենց պաշտօններով ալ իրարմէ կը զաւանգանան եւ տարբեր անուններ կ'ընտանան, ինչպէս են, Մոխր Գանունք, որք ոսկր մի ուրիշ ոսկրի վրայ կը ծառլեն կը ծռեն. Տարգիլ, որք առաջնոյն հակառակ, ոսկր մի ուրիշ ոսկրի ուղղութեան կը վերադարձնեն, ինչպէս են Բազկաց, Սրունից և այլն Մկանունքն. Երջանակիլ՝ ջրանաւոր շարժում մի կը պատճառեն, ինչպէս են Զստի մկանունքն. Վայրահայէ, Յղարայիլ, ինչպէս են ձեռքերը երեսն 'ի վեր կամ 'ի վար դարձնող մկանունքն. Վախիլ, Շարժիլ և այլն: Ընդ ամենը մարմնոյն մկանունքը 400 էն աւելի են, ուրոց իւրաքանչիւրի դրից, կծկման եւ երկարելոյն համեմատ կը պատճառուին մարմնոյն վրայ տեղի ունեցած ամեն մեծ և փոքր շարժումները: —

Մկանանց կծկման կամ երկարելոյն զօրութիւնը կախումն ունի մանրաթելներու ուղղութեանէն եւ թիւէն. իսկ շարժման տարածութիւնը անոնց երկարութեանէն: Մկանունքը՝ մարմնոյն մէջ գտնուած ջրերուն միջոցաւ Ըղեղին հետ հաղորդակցութիւն ունին և անտի ստացուած գրգռութեամբ է որ կը կծկին. երբ այս գրգռութիւնը



դադարի միանունը կը թուլնան. այս տեսակներն կ'ըսուին Կամա-որ շարժման Պաննա, ինչպէս են. Բազկաց, Ոտից, Մատանց, Միջաց, Պարանոցի և այլ այն տեղերու Մկանուկը, որք մեր կա. մաց համեմատ կը շարժին կամ կը դադարին: Բայց կան Մկանուկք ալ, որք ոչ թէ մեր կամքովն, այլ յատուկ օրէնքով մը կը կծկին կամ կ'երկարին. ինչպէս են, Սրտի, Ստամոքսի, Աղեաց եւ ուրիշ Մենդեան գործարաններու Մկանուկը, որոց շարժումն մեր կամքէն կախումն չունի, այս տեսակներն ալ կը կոչուին Ախմայ շարժման Մկանուկք:

Կայո-լի-ն և Գնայք. — Դարդոյ թէ՛ մկանուկը եւ թէ՛ բոլոր գործարանները այնպիսի դիրքով գետեղուած են, որ իւր Կայո-լի-նը մարմնոյն ուղիղ և հաստատուն դիրքով երկու ոտից վերայ կենալով կ'ըլլայ: Ոտից լայնութիւնը իւր բովանդակ ծանրութիւնը կրելու բաւական խորիխ է. Կանքը բունին ծանրութիւնը հաւասարակը ռելու կը ծառայէ, և մէջքէն վար եղած մկանանց զօրութիւնը կ'օգնէ ազդերց եւ Սրունից ոսկորներն ուղիղ դիրքով պահելու: Իսկ Շարժումը կամ Գնացքը կը կատարուի, երբ մարմնոյ ծանրութիւնը միմիայն ոտից միոյն վրայ յենլով, միւսը ծնկաց յոռւածոյն ծալուածքովն գետնէն բարձրանալով յառաջ կը նետուի, այսպէս յաջորդաբար, որով մարդ կարող է զինքը մի տեղէ ուրիշ տեղ փոխադրել: Քալուածքը՝ գնացած տեղւոյն զրից համեմատ կը տարբերի: Զառ ՚ի վայր տեղ մը գնալու ատեն մարմինը յառաջացած ոտից վրայ կը ծանրանայ, զոր կրելու կ'օգնեն Զստոսկերաց տարածիչ մկանուկքն և այս է պատճառը որ զառ ՚ի վայր իջնալու ատեն մարդ աւելի յօգնութիւնը միջաց վրայ կը զգայ. իսկ զառ ՚ի վեր ելնելու ատեն

մարմինը ետ մնացած ոտից վրայ կը ծանրանայ, զոր կրելու կ'օգնեն ծնկաց եւ կոճիկներու տարածիչ մկանուկքն, որով եւ յօգնութիւնը աւելի կոճիկներու վրայ կը զգացուի:

Ստնք են ահա մարդոյ մասնաւոր կամ ամբողջական Շարժման ծառայող գործարանները, թէ եւ Զղերն եւս մասամբ մի կը մասնակցին այս գործողութեան, բայց իրենց պաշտօնը աւելի Զգացման վերաբերելով՝ հետեւեալ գլխոյն մէջ պիտի խօսիմք ատոնց վրայ:

(Շարունակելի:)

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

### Շ Ի Լ Լ Ե Ր Ի

(Շարունակութիւն և վերջ. տես թիւ 1:)

Շիլքեր իւր նիւթին յարմար ձեւ մ'որոշելով՝ գերմանական ողբերգու թեան մեծավերջ ոտանաւորը թողուց եւ Վալլանտէնի Բանիլ գերմանական նախկին կատակերգուաց գործածած չափով նոյնայանգ ոտանաւորով գրեց:

Հաստատուած է, որ Գաբուշինեալ նի երգումը Շիլքերինը չէ, այլ Կէօթէինը, որ յօժարութեամբ նոյն ժամանակի ժողովրդական երգմանց նմանիլ կ'ուզէր: Կ'ըսուի թէ նա ուրիշ բան ըրած չէր, բայց եթէ նոյնայանգ ոտանաւորի շրջած Սանդա — Գլարա անուն կղերի մը գրուածները, որոց մի քանի հատակոտորները պահուած են:



Շիրէր 1798 տարւոյն վերջը առաջին անգամ Վալանտգէներ ներկայացոյց Վէյմարի թատրոնին մէջ, զոր Վէյմարէն հաստատած էր և կը վարէր զայն. աւելորդ է տեսլ որ այս թատրերգութիւնը մեծ յաջողութիւն ըստացաւ. Հաստատութիւնը հիացմամբ գրաւեցաւ և Վէյմարի դուքսը Շիրէրի տաղանդին վերայ չափազանց զարմացաւ եւ ստիպեց զնա, որ վերջնական կերպով 'ի Վէյմար հաստատէ իւր բնակութիւնը եւ նա ուրախութեամբ հնազանդեցաւ: Այն ժամանակ երկրորդ անգամ իւր անձն թատերագրական արուեստին նուիրեց լիովին. մի քանի տարւոյ մէջ միմեանց յաջորդեցին Օրլէանի օրիորդը <sup>(1)</sup>, Մետեյի նշանածը, եւ Մարի Սպարդը: Յառաջայն թարգմանած էր Եւրիպիդէսի Իփիգէնէն յՕլէա <sup>(2)</sup>. Այս մի և նոյն ժամանակամիջոցին մէջ 'ի լոյս ընծայեց նաեւ Մագպէլի, Ֆիլթապի, այսինքն

(1) Օրլէանի Օրիորդը (Ժան Կոմս Բր), Ֆեմաշը. չակ դիւցազնուհին, շնական աղջկ մ'եր, ազբատ ծնողաց դուստր, որ ծնաւ Լորենի Տոմբի գիւղը 1409 ին: Սա, իւր Տոմբուութեան հասակին մէջ, հաւատարմութեւն Լորեն կը հրամայէր Անկլագիներէն նեղուած Ֆրանսացիքն աղաւտել, Ետը Եր գտնելու համար 'ի Պարիզ գնաց, Օրլէանի պաշարումը վերջնել տուաւ (1429), յաղթութիւնէն 'ի յաղթութիւն առաջնորդելով զթագաւորը՝ Ռենի մէջ օծել տուաւ զնա, և ժամանակէ մը յետոյ Գոմպիէն քաղաքի պաշարման մէջ կալանաւորելով (1450)՝ Անկլագացոց վճռուեցաւ, որ զայն իբր վնուկ կենդանւոյն այրեցին Ռուանի մէջ 1451 մայիս 30 ին:

(2) Իփիգէնէ, դուստր Կլետեմեոսորա և Ագամեմնոնի, Յունաց նաւերն 'ի Տրոյագա արշաւելու համար Բեովտոյ Օլիս քաղաքը ժողոված ժամանակ Արտեմիս նաւարկութեան կարեւոր հովը դադրեցոյ Արքիանգոց Ագամեմնոն թագաւորին զայրաջած լինելուն համար, վասն զի Ագամեմնոն իւր սիրելի Եղնիկն զարկած էր: Պատգամ հարցուելով իմացան որ քաւութեան համար պետք է Ագամեմնոնի իփիգէնէն դուստրը զոհել, Ագամեմնոն բանալին իւր դէմ չը գրգռելու համար պարտաւորեցաւ հնազանդիլ, բոլոր երբ աղջկը բազինն հանեցին՝

Կօծծի <sup>(1)</sup> Իգալան Դիմիտրի Եւ Բիգարի <sup>(2)</sup> Անգլի Կէ Մէնէմ <sup>(3)</sup> և Ռիլին ու սպրիլն վերնագրով երկու Ֆրանսական կատակերգութեանց թարգմանութիւնները: Բացայայտ կը տեսնուի թէ ինչ յարատեւութեամբ բոլոր թատերագրական միջոցներն կը հետադուէր և նորա բոլոր տեսակներն կ'ուսումնասիրէր: Արդարեւ նա իւր բովանդակ կենաց մէջ բարելաւելու փափաքանօք լի էր. երբէք իւր անձէն բաւականաչափ գոհ չէր. իւր տաղանդի այս երկրորդ շրջանին մէջ, իւր ողբերգութեանց դեղիցկութեանց մէջէն, դիւրին է նշմարել այն մարդը, որ անգագար նոր ձեւեր կորսնէր եւ նոր ճիգեր կ'ընէր:

Շիրէր իւր թատերագրական աշխատութեանց մէջ քնարերգական բաւանատեղծութիւնը չէր թողուր: Մի և նոյն ժամանակ բազմաթիւ նշանաւոր քերթուածներ յորինեց. Զանգալի Լընչոմ, որ խիստ մեծ յաջողութիւն ունեցաւ, Գասանարի երգը <sup>(4)</sup>, յաղթան

Արտեմիս գթալով նմա՝ նորա տեղ եղնիկ մը դրաւ և օրիորդը յափշտակելով Տարիա տարաւ, որպէս զի անդ իւր մեհակին մէջ քրմուհի լինի:

(1) Շարլ Կօծծի, հռչակաւոր թատերագիր, ծնաւ 'ի Վենետիկ և մեռաւ Թիք դարուն ոկիզները:

(2) Լուի Պենուա Բիգար, նշանաւոր թատերագիր, ծնաւ 1769 ին 'ի Փարիզ և մեռաւ 1828 ին: Հախտալէս հռչակեցաւ իրեւ հեղինակ, յաջորդաբար զանազան թատրոններ վարեց և 1807 ին Ֆրանսիոյ Ակադեմիան ընդունուեցաւ. բայց 'ի բազմաթիւ թատերգութիւններէ, ունի նաև քանի մի վէպեր:

(3) Մէնէմ <sup>(Menechmes)</sup>, անուն երկուորեակ եղբարց, որք խիստ համանման էին միմեանց: Սոքա բազմաթիւ կատակերգութեանց նիւթ եղած են:

(4) Գասանար, Տրոյիոյ Պրիամոս թագաւորին և Հեկաբէի դուստրը, մարգարէական ձիրք ընդունեց. նախապէս յայտնեց իւր հայրենակցաց այն թշուառութիւններն, որոց պիտի ենթարկուէին Տրոյիոյ աւամբ, բայց նոցա չէին հաւատար: Սա Ագամեմնոնի վնասելով՝ Յունաստան տարուեցաւ, ուր Ագամեմնոնի հետ սպանուեցաւ:



փծնը, կամ Յոնայ նաապոլիս լըն, եւ  
 քուր լաւագոյն վէպերն ու պարերգնե-  
 րը: Վէյմարի դքսին խնդրանքօր Ռա-  
 սինի Փեդրային (1) թարգմանութիւնն  
 եւս ըրաւ, որոյ մէջ իւր ընդաբոյս  
 խնամքն ու ուղղամտութիւնը կրփայլի:

Բայց այս թարգմանութիւնը Այոմ  
 Գէլլէն յետոյ երեւեցաւ, որ Շիլլէրի  
 գործոց վերջինն ու ամենագեղեցիկը,  
 և ըստ լուսամիտ մարդկանց գերմանա-  
 կան տեսարանի գլուխ-գործոցն է, և  
 անտարակոյս թատերագրական ար-  
 ուեստին գլուխ-գործոց առաջին կար-  
 գըն եւս դրուելու արժանի: Սա զօ-  
 րեղ եւ հասուն հանձարոյ, բանաս-  
 տեղծական երեւակայութեան և գեր-  
 ազնիւ հոգւոյ գործ մ'է: Աթորդ եմք  
 ասել նաեւ, որ Շիլլէրի այս գործը  
 գլխովին սկզբնական է: Ողբերգութեան  
 ձեւերն ու ընթացքը ոչ նկատողու-  
 թենէ եւ ոչ նմանողութենէ ծնունդ  
 առած են, այլ նոյն իսկ նիւթոյն յը-  
 ղացումէն:

Գծուարին է ըմբռնել թէ ինչպէս  
 պատմագրաց եւ ճանապարհորդաց  
 պարզ պատմութեամբ կարողացած է  
 բանաստեղծի մը երեւակայութիւնը  
 երկրի մը վերայ այսպէս լիակատար և  
 այսչափ մանրամասն ծանօթութիւն  
 ստանալ և զգածուիլ այն ամեն տպո-

ւորութիւններով, զոր մարդ նոյն իսկ  
 տեղերն չըջնելով կ'ունենայ: Գոգցես  
 ամենայն ինչ Հելվետիա կրներշնչէ: Այ-  
 յոմ Գէլլէն մէջ: Անդ կը տեսնուին նո-  
 րա դիպքերն, անգ կը լսուին նորա եր-  
 գերն, անդանօր կ'ամփոփին նորա բու-  
 վանդակ յիշատակարաններն, և 'ի նա-  
 ակն յայտնի կը նշմարուին նորա բար-  
 քերն: Ահա այսպիսի պարզ և դիւ-  
 ցազնական ժողովրդեան մը, այսպիսի  
 նկարելի երկրի մը վիճակին վերայ կը  
 կայանայ գործոյն կարեւորութիւնը, և  
 այս է որ նորա ընթացքին մէջ այնչափ  
 կենդանութիւն և միութիւն յառաջ  
 կը բերէ: Հարստահարութեան և բըռ-  
 նութեան այն ամեն տեսարանները, որք  
 մի զինի միոյ յայլ և այլ տեղիս կը յաճա-  
 խեն և զանազան ընտանեաց մէջ վիշտ  
 կը պատճառեն, սերտիւ կտպուած են  
 իրարու հետ և Հելվետիոյ հարստա-  
 հարութեան միակ և ընդարձակ պատ-  
 կերը կը յորինեն:

Բռնակալութեան դէմ եղած ընդ-  
 դիմութիւնն ու յեղափոխութիւնը,  
 ազատութեան զգացումներն, պարզ,  
 տեղական և պատմական եռանդ մ'  
 սւնին: Բարի գիւղացիք իրենց դրա-  
 կան իրաւունքը կը պահանջեն և բըռ-  
 նութեան ու խոտմնադրութեան  
 դէմ կը զինին: Իրենց սրտմտութիւ-  
 նը հանգարտ, զօրաւոր եւ խոհա-  
 կան է: Իրենց յեղափոխութիւ-  
 նը կանոնաւոր եւ երկիւղած է: Իբ-  
 ժուարին է Ռիւդէլի ժողովին գեր-  
 մանական թատրոնին վերայ յառաջ  
 բերած յուղումն երեւակայել, ուր  
 պատրաստութիւններն երբէք ծաղրա-  
 չարժ չեն, այլ առաւել նպաստամա-  
 տոյց: Ճշդիւ 'ի նկատի առնուած  
 Հելվետիոյ աւագաժողովոյ այն ամեն  
 ձեւակերպութիւնները, նախագահի  
 առջեւ դրուած երկու խաչաձեւ սու-  
 րերը, ծանրութեամբ և ճշդիւ հաշու-

(1) Փեդրա: Դուստր Մինոսի և Պատիպայայ  
 առ Թեսէոսի հետ ամուսնացաւ և նորա իպպոլե-  
 դոս որդւոյն սիրահարելով իւր տուփանքը յայտ-  
 նեց նմա և տեսնելով՝ որ փոխանակ սիրոյ զոր-  
 հուանք կ'աղէ 'ի նա, զայրացաւ առ նախան-  
 ձուն և Թեսէոսի զրգարտեց զնա իբր գարանակալ  
 իւր պարկեշտութեան: Թեսէոս հաւատաց նմա և  
 և առ զայրոյթ սրտին Պատիպայի վրէժխնդրութիւ-  
 նը հայցեց իւր որդւոյն վրայ: Այն ինչ իպպո-  
 ղիդոս կառքով ծովը դնէ կերթար: անարկու նը-  
 հանգ մը ծովէն խրտեցուց նորա ձիւրը, որք ժայ-  
 ւոյ մը դարձելով խրտակեցին կառքը և զինքը ըս:  
 պաննեցին: Ասկիւնիտոս յարոյց զայն: բայց փեդրա  
 իւր խղճէն տանջուելով յայտնեց Թեսէոսի իւր  
 մեղքը և ինքըզինքն սպանեց:



սեռ թու էները, գումարման հանգիստաւոր պարզութիւնը, տեսարանին վայրը, այս ամենը՝ մեծութեան եւ պարզութեան երեւոյթ մը կ'ընծայեն եւ երբ միտքանկարք տրեւածագին նախկին նշոյլներով միանգամայն ի տես կը գան եւ իրենց երկիւղած ձեռնարկը աղօթքով կը օրբադործեն, մարդ զարմայմամբ եւ պատկառանք կը համակի

Հին աւուրց ժողովրդեան մը այս պատկերին մէջ Այլոմ Գէլլի մեծ կերպարները ակն յայտնի կ'երեւի։ Երջանիկ գազափոր մ' է այս, որ զայն իւր հայրենակցաց շարժումէն այսպէս կը չեղարացնէ։ Այլոմ Գէլլ կը մերժէ փառանկը եւ սակայն զօրութիւնը, վեհանձնութիւնը, անձնաւիրութիւնը եւ հայրենասիրութիւնը լիովին իւր մէջ կը տեսնուին։

Յիլլէր այն ժամանակ ախորժիկ կացութիւն մ' ունէր, մշտանորոգ եւ անհակառակելի փառքով մը շքապատուած, ընտանեաց բարի հայր եւ առանկն կենօր երջանիկ, բանաստեղծական սուրբ գաւառի մը մէջ բարեբաւօր եւ վեհապան, ուր ի գործ գըրած էր իւր հոգեւոյ բոլոր գործունէութիւնը եւ իւր կենաց բովանդակ շահր, ունենալով իբր զօսանք իւր հայրենեաց մեծահոգակ մարդկանց բարեկամութիւնն ու խօսակցութիւնը։ Բայց աւան, այս անգործութեան եւ բարօրութեան մէջ իւր զօրութիւնն ու առողջութիւնը արագապէս կը քայքայուէր։ Նա կանխաւ կը զգար իւր վիճակը եւ սակայն իւր առ աշխատութիւնն ունեցած եռանդը չէր նուազեր։ Ուսումն իրեն համար երջանկութիւն մ' էր եւ ոչ յոգնութիւն։ Իւր յաջողութիւնները զինքն կը խրախուսէին եւ իւր համբաւն իր վերայ նոր պարտաւորութիւններ կը յաւելցոր։ Նորագլուխը թաաերագրական յղացումնէ

բով լի էր, ուր զայնա իւր խորհրդածութիւններով եւ հետազոտութիւններով կը հասունցներ։

Այս աշխատասիրութեան ժամանակ, երբ յաջողութեանց եւ երջանկութեան երկայն ասպարէզ մ' ունէր, նա կը յաւտար տակաւին, անագորցն մահր եկաւ հարուածեց զայն իւր ամենասիրելի յօժարութեանց մէջ։ Այլոմ Գէլլը ներկայացնելու համար Պեռլին ըրած ձանապարհորդութիւնը զայն ուժաթափ ըրաւ, եւ անտի հիւանդ վերադարձաւ։ Իւր ընտանիքն ու բարեկամները մեծ մոտանջութեան մէջ ինկան։ Փոքր ինչ կազդուրեցաւ եւ իւր գործերն վերակաւ։ 1804 տարւոյն վերջը Ալեյմարի ժառանգ իշխանին եւ Ռուսիոյ մեծ-գըբսուհւոյն ամուսնութեան հանգիսին համար քնարերգական տեսարան մը յօրինեց, որոյ ոտանաւորները շնորհք եւ պերճութեամբ լի են։

Մի քանի ամսէն յետոյ վերադաին հիւանդացաւ եւ հարթխային տենդէ մը բռնուեցաւ, որ մահաբեր յատկութիւն մ' օտանալով՝ 1805 տարւոյ մայիս 9 ին ընկձեց զայն։ Քառատուն եւ հինգ տարեկան էր։ Իւր վախճանը քաղցր եղաւ։ Յետին շունչն արձակելէն մի քանի փայրկեան յառաջ Տիկին տը Ալլըղովէն հարցուց նմա թէ ինչ պէտէս, պատասխանեց, միշտ աւելի խօշտղ։ Այս էր արգարեւ նորա կեանաց պատմութիւնը, այս է, որ Յիլլէլի ըսել տուաւ թէ նա՝ բառին բովանդակ նշանակութեամբ առաքինի բանաստեղծ մ' էր, որոյ սուրբ հոգին իւր բոլոր կենաց մէջ միշտ պատկառ կեցած է ճշմարտութեան եւ յաւիտենական գեղեցկութեան։ Կսմեցած էր նա, որ իւր թաղումն անշուր լինի։ Նորա մարմնը գիշերով



իւր վերջին բնակարանը փոխադրեցաւ  
իւր բարեկամներով և երիտասարդաց  
բաղմուն թեամբ չընտարստուած՝ «Մա-  
շիսի խաղաղ գիշեր մ' էր, կ'ըսէ Տի-  
կին տը Վոլլզոմէն, սոխակաց այսպէս  
բարձր և այդչափ զեղուն երգելն լսած  
չէի երբէք, որչափ այս անգամ ոչ Եր-  
կինքը միջին ամպերով ծածկուած էր։  
Երբ մարմինը շիրմին առջեւը դրուե-  
ցաւ, անմիջապէս լուսինն ամպոց ծո-  
ցէն դուրս ելաւ և իւր տմայն նշոյնե-  
րով գազազը լուսաւորեց, որոյ վերայ  
Շիլլէրի անունը փորագրուած էր, բայց  
երբ մարմինը շիրմը դրուեցաւ՝ վե-  
րլստին անհետացաւ։

Ամենուստէք խնդրեցին, որ Վէյ-  
մարի թատրոնը զինքն պայծառացնող  
քերթողին հանդիսաւոր մեծարանք մ'  
ընծայէ. ուստի Կէօթէ Զանգակի բա-  
նաստեղծութիւնը թատերգութեան  
ձեւով ներկայացնել տուաւ (հաւա-  
ւորէն 10 նոյեմբեր 1805 ին) և այնու-  
հետեւ սովորութիւն եղաւ Շիլլէրի  
ծննդեան տարեդարձը ամեն տարի  
տօնել։ Կէօթէ այս ներկայացման հա-  
մար սրտաշարժ վերջաբան մը յորինեց։  
Այս հանդիսաւոր և գաշն ձայնով մ'  
արտասանուած վերջաբանը, որ առ-  
մարդն և առ բանաստեղծն խանդա-  
ղատելի հիացում մը կը ներշնչէ. ան-  
տարակոյս 'ի փառս Շիլլէրի կողուց-  
ուած քսրը յիշատակարանաց մէջ՝ նո-  
րո սրտի ամենահաճելին է։ Այս կեն-  
սագրութիւնը չեմք կարող աւելի լաւ  
կերպով վերջացնել և ոչ իսկ լուսագոյն  
կերպով ամփոփել այն տպաւորութիւ-  
նը, զոր կը փափաքեմք, որ ընթերցողաց  
սրտին մէջ անջնջ մնայ, եթէ ոչ սոյն  
քնտրերգական գրուտեաց ներբող-  
ներն համառօտագրելով, որ մեզ ա-  
ռաւել արդարն, աղղուն և միանգա-  
ման անկեղծն ըլլալ կը թուին։

«Մերն եղաւ նա, իցին թէ այս

վսեմ խօսքը մեր ազմիպից վշտին վե-  
րայ թագաւորէ։ Նա կամեցաւ առ-  
մեզ, իբր յանքոյթ նաւահանգստի,  
կատաղի փոթորկէն յետոյ, մշտապէս  
խողաղութեան ճաշակն առնուլ։ Սա-  
կայն իւր ոգին դէպ 'ի ճշմարտին, բա-  
րւոյն և գեղեցկին յաւիտենական թա-  
գաւորութիւնը կը վերապանար անդի-  
մադրելի զօրութեամբ, և նորա ետեւը  
գետնամած կը մնար ամբոխն ու ու-  
միկը, որ թէ և ոչինչ, այլ սակայն մեր  
վերայ կը ներգործէ . . . :

«Իւր Ա. յտերը, եւս քան զեւս պայ-  
ծաւ, կը բոցավառէին այն երիտասար-  
դութեամբ, որ չը թառամիր երբէք,  
այն տրութեամբ, որ ագան կամ ա-  
նագան անզգայ աշխարհի ընդգիմու-  
թեան կը յաղթանակէ, այն ամենա-  
բարձր հաւատով, որ մերթ համար-  
ձակաթոխ կը խոյանայ, մերթ յուշիկ  
կ'ընթանայ, որպէս զի բարին գործէ,  
զարգանայ եւ օգտակար լինի, որպէս  
զի գայ վերջապէս այն օրը, ուր ամե-  
նայն ինչ պիտի ազնուանայ . . . :

«Գուք ճանաչեցիք զայն, գուք գի-  
տէք թէ ինչպէս հսկայաբոյլ կամեցու-  
ղութեան և կատարելութեան սահ-  
մանը կ'ընթանար, գիտէք թէ ինչպէս,  
ժամանակի և միջոցի մէջէն, լուրջ ախ-  
նարկով մը ժողովրդոց բարքն ու մտաւ  
ծումներն կ'ընթեռնուր։ Բայց գիտէք  
նաեւ թէ ինչպէս մեր մէջ, իւր ար-  
շուանքէն շնչասպառ, հիւանդու-  
թեամբ կը հիւժէր և դժուարաւ կա-  
պրքիներ։ մեք այս վերջին ակրապէս  
գեղեցիկ տարիներուն մէջ սորա փորձն  
առինք, վշտակցելով նմա, քանզի նա  
մեզն էր . . . :

«Ի կանուխ ժամանակաց այս ան-  
դառնալի վճիռն կարգացած էր նա, և  
վշտաց և մահու ընտելացած։ Եւ ահա՛  
վերջապէս ինչպէս որ զայն յաճախակի  
առողջացած անսած էինք, տեսանք նաև



նորա փոխումն յաշխարհէս, ահա՛ ՚ի զորհուրանս մեր կատարեցաւ այն, յորմէ ընդ երկար յանհնարինս կը զանգիտէինք: Բայց երբ նա իւր ակնարկը յերկիր խոնարհեցնէ, արդէն իւր վեհաշուք էութիւնը աստ փառաւորուած կ'երեւի: Ինչ որ երբեմն ժամանակակից աշխարհը նորա մէջ աւաղելի եւ եպերելի կը համարէր, մահն ու ժամանակը զայն ազնուացուցին:

«Բազմաթիւ հանճարներ, որ ընդ նմա մրցեցան և յաւ ՚ի սիրտ ճանաչեցին նորա բարձր արժանիքն, այսօր նորա զօրութեամբ օգեւորուած կը դգան զիրենք, կամակար նորա ապրած մթնոլորտին մէջ սահմանափակ լինելով: Նա դէպ ՚ի վսեմ բարձունքները վերաթեւեց, սերտիւ կապուած լինելով այն ամենուն հետ, որք մեծարելի են մեզ: Տօնեցէք ուրեմն զայն, վասն զի ինչ որ կեանքը կ'իստի չտի կը շնորհէ մարդոյն, յաջորդ սերունդը ամբողջապէս կը պարտի նմա...»:

Այս արտաբերութիւն աղաղակը, «մէրն եղաւ նա ո՞ այսօր ողջոյն Գերմանիա կը կրկնէ: Երբէք ազգ մը՝ բանաստեղծ մը չընդունենց և ոչ զայն իւրն անուանեց, չըսեմ՝ այնչափ զարմացմամբ, որչափ խանդաղատական սիրով: Եւ նա արժանի եղաւ այս ընդունելութեան եւ կարէ տիպար հանդիսանալ այն պաշտամամբ, զոր կը մատուցանէր բարեւոյն հետ զուգախառնեալ գեղեցկին, այն բուռն եռանդեամբ, զոր կը տածէր մարդկութեան օգտակար, մեծ և վսեմ համարած իրաց համար, այն բարձր դադափարով, զոր ունէր այս աշխարհիս մէջ հանճարի պաշտօնին նկատմամբ և առ այս ունեցած անհուն անձնուիրութեամբ, և վերջապէս մտքի և սրտի այն համընթաց յաւաքողիմութեամբ, զոր ամ ըստ ամէ կը ցուցնէր: Կրկնենք Կեթեմէին հետ,

«Ինչ որ նախապէս նորա մէջ աւաղելի և եպերելի էր, մահն ու ժամանակն ազնուացուցին»: Եւ իրաւացի է այս, վասն զի նա ինքնին սկսած էր ազնուանալ, քաջութեամբ մարտնչել, օր ըստ օրէ իւր հոգին աւելի սուրբ, աւելի անկեղծ կը լինէր և առաւել կը բարձրանար:

Այն «իւրեղն անդիմէ վերայ, որ յԱստուած  
իւր յանգի:»

Խիստ սակաւաթիւ են անոնք, զորոնք փառքն աւելի ազնուացուցած է և ոգեւորած, ոչ ինքնին, այլ բարեւոյն և գեղեցկին բոցավառ սիրով: Նա որչափ ասպարիւղին մէջ կը յառաջէր և հանճարով կը զարգանար, նոյնչափ իւր անձին վերայ պարտաւորութիւններ կը յաւելցար: Նա իւր անձը ըստ ամենայնի աշխատութեան նուիրած էր և իւր հոգին իւր՝ ո՞ճոյն մէջ կը փայլէ: Այս անձնուէր և զօրեղ, ազատասէր եւ ճոխ բնութեան մէջ մարդն ու բանաստեղծը անբաժան էին իրարմէ: Նա բանաստեղծութեան եւ այն ազնիւ նըպատակաց կը ծառայէր, զոր ընտրած էր ՚ի բոլոր սրտէ, ՚ի բովանդակ մըսոց և յամենայն զօրութենէ, չ'ունենալով եսութիւն, սենայնասիրութիւն, փառասիրութիւն և բարեկեցութիւն: Իւր հանճարի և բնաւորութեան ներքին համակրութիւնն աւելցնողը, ինպէս վերջ-Բանն ևս կ'ըսէ, ՚ի կանուխ ժամանակաց մարդն վշտաց դատապարտող այն անաչառ վճիռն կարգաւ յաւ և թշուառ ու վշտակիր լինիլն է: Յետին ժամանակաց բանաստեղծներ են և ոչ մին թերեւս իրմէ աւելի փառաւորուած չէ, այլ սակայն ծայրագոյն փառաց մէջ իսկ թեթեւ տխրութիւն մը իւր դէմքը կը համակէ եւ վերքը ողբացողներն ՚ի տես նորա կը գոչեն, «Մե՛րն եղաւ նա ո՞»:



« Մէրն եղաւ նա » կարող են քսել նաեւ ամեն անոնք, որ անասանք իրաց և նիւթական շահույց յորձանաց անձնատուր եղած չեն և այլուր կտու նեն իրենց պատասպարանը, քան թէ այս ստորին աշխարհիս մէջ. որովհետեւ իրմէ աւելի որոյ կարող եմք պատշաճեցնել այս գեղեցիկ խօսքերը, որք մի քանի չաբաթ յառաջ ծափահարութեամբ ընդունուեցան: « Արարչագործութեան երեւոյթը, որչափ ևս գեղեցիկ լինի », և ես կը յաւելում, որչափ եւս գեղեցիկ երեւցած ընի նմա. « նորա համար ոչ այլ ինչ է, բայց եթէ իւր ճշմարիտ գեղեցիկութեան անդրադարձումն Նա երեւոյթի ներքեւ կը աեսնէր, կը խուզարկէր իրականը, ճշմարիտ իրականը, այսինքն իսէականը: Այս այն խօսքերէն մին է, որք վերջ կը տան վէճերու, սահմանելով զանոնք և իրաց իրենց ճշգրիտ բնութիւնն ընծայելով: Այն, սնտի երազասեաներ չեն անոնք, որք առօրեայ իրերէն աւելի կը փսրին անոր, որ յաւիտենական, բացորձակ և անփոփոխ է, անոր, որ էն փառք: Սակայն հարկ չէ մոռնալ, որ արուեստն ինքնին սրչափ սուրբ և որչափ երկնային լինի, ի Սրբութիւն սրբոց առաջնորդող աստիճաններն կը կաղմէ միայն. ուստի պէտք չէ նմա երկրպագանել իբրեւ մեր Աստուծոյն: Մանաւանդ երբ կը տեսնեմք, որ հանձարն զիս կ'առնու ճանապարհին վերայ և միջոցը վսիւ ճանին հետ շփոթելու վտանգին մէջ կ'իյնայ, այն ժամանակ հարկ է առաւել առ հանձարն գոչել. « Ի վեր, ի վեր անդր բարձրացիր »:

Թարգ. — Ի Ֆրանսիէնէ:

Մ. Ս. Յակոբէան:

## ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

Ի Ստորք Էջմիածին, 1876 Յուլի 20.

Ամսոյս 25ին կ'ըսակի որք Աւստրիոյ Լոյիտի ընկերութեան (ettore) անուն շողենաւը Յոպպէյու աս Զեւ խարրս խեց, և ժամ 8ին մեկնեցանք անտի. գիշերը ժամը 5 էր հասանք Հայֆա կամ Քայֆա փոքրիկ աւանը. նաւահանգիստը գեղեցիկ և բնական ծոց մի է դէպ յարեւմուտ մտած, ծովը աւրեւմտեան մրրկայոյդ փոթորիկներէն խռոված ատեն, նաւերը աստ կապուելին և վերահաս փտանգներէն կ'աղատին. բնակիչք Մահմետականք և Յոյնք, սովորական լեզու Արաբերէն: Աւանը Կորմէլոս լեւան ստորոտը և ծովեզերքը կառուցուած է քարուկի շինուածովք, և մէկ անկիւնը Գերմանայի գաղթականք Եւրոպական ձեւով փողոցները լայն և աղքատիք, կարգաւորեալ տուններ շինած են, չորջուպատը փոքրիկ պարտէզներ եւ արտեր մշակելով. աւանին գիրքը իւր բոլոր զուարճալի պարագաներով զգալի է, լեւան ստորոտէն մինչ ի գլուխը բաւական լայն ճանապարհ մի բացուած է, որ Լատին կրօնաւորաց մենաստանը կ'առաջնորդէ. այս մենաստանը բաւական մեծութիւն կառուցուած է յանուն Եղիայի Մարգարէին, ինչպէս կ'աւանդեն աստ աղօթեց Մարգարէն անձրեւի համար յաւուրս Ս. քաարու, և աստ կոտորեց Բահաղու Մարգարէից ջուրը զոհ մատուցանելու ատեն. երկրագործութիւնը և ձիթենեաց մշակութիւնը ծովեզերքէն հեռի են: Շողենաւին ճանապարհը սոյն ամուսնէն շտապելով կ'երեւին կարգաւ Աքքէ քաղաքը իւր ամուր բերդով և գեղեցիկ նաւահանգստովն, որ Արաբիոյ դուռը կամ կադունը կ'անուանի, որոյ վերայ



Խաչակիրք մեծամեծ պատերազմներ մղեցին Արաբացւոյ հետ, որոց զօրա գլուխն էր նա ինքն Մէլիք Սալահատ տին, և ՚ի վերջին ժամանակս Փոխարքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի ընդ Ապտուլահ Փաշայի. և ապա տորմոյն Անգղիացւոյ խորտակեաց խաղառ ըգ բռնութիւնս Եգիպտացւոյ: Գետ այնորիկ Տիւրոս և Սիգոն (Սուռ և Սայտայ) հին աւուրց հռչակաւոր քաղաքներն ծովափունքը շինուած, որոց շուրջը կ'երեւին փոքրիկ աւաններ և գիւղեր, մշակուած արտեր և պարտէզներ, թէպէտ երկիրը քստ մեծի մասին լեռնոտ է և կը տարածուի մինչեւ Լիբանանու լեռանց շղթայներու ստորոտը, բնակիչք Արաբացիք Քրիստոնէից հետ խառն, որոնք կը պարապին նաւարկութեան, ձկնորսութեան և երկրագործութեան: Փիւնիկեցւոց այս հին փունքները անցնելէն յետոյ երկուշաբթի առաւօտ ժամ ջին հասանք ՚ի Վերիսոն, այն է Պերութ, նաւահան գիտ Ռոորեաց: Կանոնաւոր նաւահանգիստ չունի, և ալեկոծութեան ատեն նաւերուն ապաստանարանն է լայ աղի կոչեցեալ գետաբերանն: Հին քաղաքը ծովեզերքը շինուած և պարսպապատ էր, ուր տակաւին կ'երեւին բերդին մնացորդները, այլ 1850 թուականին երբ քաղաքը սկսաւ օրքան զօր ձգխանալ պարիսպը քանգեցաւ, և քաղաքին ընդարձակութիւնը մինչեւ լեռներուն ստորոտը տարածուեցաւ, և հետզհետէ զարգարեցաւ շքեղացաւ մեծամեծ և երեւելի շինուածներով, ընդարձակ և գեղեցիկ պարտէզներով, հոյակապ և փառաւոր եկեղեցիներով գոբրոցներով, հիւանդանոցներով տպարաններով և այլ օգտակար շինուածներով, որոնք արդիւնաւորեցան Եւրոպացի գաղթականաց յաճախութեամբ և վաճառականու-

թեան զարգացումաբ: Երեւելի է աստարքունի զօրանոցն և հիւանդանոցն, որ առաջնոյն մերձ է Հայոց Ս. Նշան եկեղեցին, քաղաքին նոր կենդանութիւն տուած է նախքէլ շէլայ կոչեցեալ գետոյ ջրոյն բաշխումն, որ կազմուած ընկերութեան շոգեշարժ մեքենայով երեւելի տեղեր ջուր կը մատակարարէ, յորմէ բաժին սենի Հայոց վանքք և շինուած է փոքրիկ մարմարանիայ աւազան մի եկեղեցւոյ առջեւ. քաղաքին նոր բացուած ճամբաները Եւրոպական սճով կարգադրուած է: Բնակիչք հարկւր քսան հազարի մօտ, Մահմետականք, Գոյնք, Մարսիսք և Եւրոպական գաղթականք, կ'գտնուին նաև քանի մի Հայ գաղթականներ, որոց ոմանք Կիլիկիոյ սահմաններէն և ոմանք ուրիշ երկիրներէն եկած և տուր և առիկ գործով կը պարապին, կան նաեւ Հռովմէական Հայեր, որոնք հայութեան անունը Պերութի մէջ իրենց սեփականներ են, կլիհայն բարեխառն լինելոյն համար, ապուան չորս եղանակին մէջ զանազան բանջարեղէն և կանաչեղէնը չը պակիր, առատ է իւր ժամանակին մրգեղէնը և ընտիր խաղողը:

Իսկ երեկոյին ժամ 1 ին նաւը երկաթը առաւ և մեկնեցաւք անտի. եւ առանց տեղ մը յանդիպելու գիշերը նաւարկեցինք, և երեքշաբթի առաւօտ կանուխ սկսաւ Կիպրոս կղզւոյն եզերքը և լեռները երեւիլ, որ կղզւոյն ընդարձակութիւնը կը գուշակէ: Մէկ ժամէն յետոյ նաւը Թուզլայի առջեւ խորսխեց. կանոնաւոր նաւահանգիստ չունի, ծովը ալեկոծեալ էր, ուստի կարելի չեղաւ դուրս ելլալ, այլ հեռուէն ծովեզերքի շինուածները կ'երեւէին, աստ է Ղազարոսի երկրորդ գերեզմանը, ուխտատեղի Քրիստոնէից ՚ի ձեռս Յունաց, աստի Տ ժամ հե-



աւարտութիւն ունի Նիկիտայ լեւոյն  
Կիւրոս կղզւոյն Մայրաքաղաքը, ուր  
կը գտնուին սակաւաթիւ Հայեր մի  
Եկեղեցիով, և քաղաքէն դուրս Մա-  
կարայ վանքը իւր կալուածներով: Բու-  
վանդակ կղզին բարեբեր է և երկրա-  
գործութեան յարմար, կը բերէ ա-  
ռատ ցորեան, գարի, կնձիթ, ընտիր  
խաղող, և ըմպելեաց զանազան տեսակ-  
ներ. մրգեղէնը առատ, նոյնպէս անաս-  
նոց և գրաստուց պէոպէս տեսակները,  
որոց մէջ անուանի է կիսէշն, Երեկոյեան  
ժամ 12 ին նաւը խարխալը առաւ և  
մեր ճանապարհը շարունակեցինք, և  
հինգշաբթի օր ՚ի լուսանալ առաւօ-  
տուն սկսան հեռիէն երեւիլ Հոռոցս  
կղզւոյն լեռնակները բլրակները և դաշ-  
տերը, որոնք մշակուած այգիներով  
ծառատնկով ծածկուած են, որոց մէջ  
տուներ և հնձաններ: Ժամ 11 էր նա-  
ւը խարխալը ձգեց, ներքին նաւահան-  
գիսան խիստ գեղեցիկ բայց ոչ ընդար-  
ձակ, միայն առաքատուոր նաւուց  
պատսպարան կը լինի. ցարգ կը նշմա-  
րուին Հոռոցսի առնապատկերին պա-  
տուանդաններն, որ նաւահանգստին  
բերանը կանգնած էր, և իւր պայծառ  
ջահովը նաւորդաց լուսատու կը լինէր,  
և աշխարհիս եօթն հրաշալեաց մին  
համարուած: Մովուն եզերքը կը տես-  
նուին հին բերդերու և աշտարակնե-  
րու մնացորդներ, և ոմանք յետին ժա-  
մանակներս նորոգուած: Քաղաքը ծո-  
վեզերքէն սկսեալ իւր ընդարձակու-  
թեամբ դէպ ՚ի վեր տարածուած է,  
չըջապատը ամուր պարիսպ իւր բուր-  
դերովն, քաղաքին տեսարանին փայլ  
մի կուտան հոյակապ մզկիթներն լայ-  
նանիստ գմբէթներով և բարձրաբերձ  
աշտարակներովն (Քնալէ), որոց ոմանք  
Յունաց եկեղեցիներէն փոխուած եւ  
ոմանք յետոյ 10 սմանցւոց շինուած, ու-  
րոց մէջ երեւելի է ճարտարապետա-

կան արհեստով և երեւելի քանդակ-  
ներով մզկիթն Սիւլէյմանայ արքայի,  
որ նա ինքն է կղզւոյն տիրոյը, քաղա-  
քին մէջ կը բնակին միայն Հրեայք և  
այլազգիք, և դռները սահմանեալ ժա-  
մանակները զգուշութեամբ կը փու-  
կուին մինչեւ ցայսօր, իսկ Յայնք իրենց  
բնակութիւնը հաստատած են քա-  
ղաքէն դուրս արուարձանները և այ-  
գիներուն մէջ ունին առանձին եկեղե-  
ցի և Մետրապոլիտ, թէ՛ քաղաքին մէջ  
և թէ պարսպաց վերայ գտնուած հը-  
նութեանց մնացորդները չը կորույտ-  
ցանք անսնել, ծովեզերքը կը տեսնու-  
ւին հողմավար աղօրիքներ և լապտեր  
նաւուց, երկիրը բարեբեր կ'երեւի  
ինչպէս որ նաւը բերած պտուղներէն  
յայտնի է, խաղող, թուզ, մեծամեծ  
ձմերուկ և այլն:

Երեկոյեան ժամ 3 ին մէկնեցանք  
աստի, միշտ աջ կողմը թողլով Ասիոյ  
լեռներու անընդհատ շղթաներն, ու-  
րոնք տեղ տեղ գիւղերով, տաւաններով  
և խիտ անտառներով ծածկուած, եւ  
շատ տեղեր բոլորովին լերկ: Հետեւ-  
եալ օրը ժամ 8 էր կ'անցնէինք Բաքան-  
իօյ կոչեցեալ կղզւոյն աօջաւէն, աւա-  
նը ծովեզերքը տափարակ դաշտին վե-  
րայ շինուած է, չըջապատը ծառատունի  
պարտէզ և այգի, և կ'ձգի մինչեւ մօ-  
տակայ լեռներուն ստորոտը, որոց կու-  
ղերը մշակուած են, իսկ գագաթը լերկ  
և անտառի նշուլ չերեւիր: Յանդիման  
սորա Ասիոյ կողմը հեռիէն հազիւ կը  
նշմարուի Պափուր-մ կոչեցեալ գիւղն և  
արքունի բերդն՝ ծովեզերքը շինուած.  
գիւղին վերի կողմի և չըջապատի լեռ-  
ները անտառուտ են: Ուրբաթ առա-  
ւօտ ժամ 10ին հասանք ՚ի Քիյոս (Սա-  
բըլ) կղզին, արդէն սկսած էին երե-  
ւիլ բարեբեր բլրակներն, որոնք լե-  
ցուած են այգիներով և պարտէզնե-  
րով, և կը տարածուին մինչեւ լեռնե-



բուն ստորը : Նաւահանգիստը բնա-  
կան զիրքով խիստ գեղեցիկ և յարմա-  
րաւոր ծոց մի է գէպ 'ի հիւսիս երկա-  
րած , որոյ արեւելեան կողմը կը տես-  
նուի հին բերդը , եւ քաղաքը ծովե-  
ղերքէն մինչ 'ի լեռան ստորոտը և յա-  
րեւելից յարեւմուտս ձգուած իրբեւ-  
լունածեւ : պարիսպ չունի , շինուա-  
ծոց մէջ կ'երեւին քառակուսի ձեւով  
բարձր աշտարակներ , որ հին ժամա-  
նակները զանգակատուն եղած են ,  
խակ յետոյ կատարէն սրածար շինուած  
մի աւելցնելով միւսերէ՛ ձեւ տուած են ,  
թերեւս սոցա կից եղած մզկիթներն  
եկեղեցի եղած լինին , ընդարձակ պար-  
տէզներու և այգիներուն մէջ կ'երեւին  
նաեւ տուներ և հնձաններ , իսկ լեռ-  
ներուն գագաթը անբեր և լերկ , որոց  
չղթաները կը տարածուին յարեւելս և  
անտի կէղին գէպ 'ի հիւսիս Բնակիչք  
Մահմետականք և Յոյք , կառավա-  
րիչ Մո-խաարիֆ , կղզին բարեբեր է և  
մրգեղէնը առատ , կը բերէ ընտիր խա-  
ղող նարինջ և կիտրոն , անուանի է մագ-  
տաքի խէջն , որոյ քաղաքը թեամբ  
ձգուած օղին հռչակաւոր է հասարակ  
անուամբ , նաւահանգիստը բաց 'ի ու-  
րիչ նաւերէն կային նաեւ Օսմանեան  
ղահաւորներ , ասոր դիմացն է Չէշմէ  
կղզին : Նաւը փութով իւր գործը ա-  
ւարտելէն զինի ժամ ջին մեկնեցանք  
անտի , նաւելով գէպ յարեւելից հիւ-  
սիսոյ , յաջ և ահեակ կղզիները և լեռ-  
ները միշտ աչքի առջեւ ունենալով ,  
մանաւանդ Ասիոյ կողմի լեռանց ան-  
ընդհատ չղթաներն , և նոցա վերայ ե-  
ղած գիւղերն աւաններն պարտէզներն  
և մշակուած արտօրայքը , որոց տե-  
սարանը խիստ զգալի և զուարճալի է :  
Այս բնութեան ձիրքերը միշտ զննե-  
լով և նկատելով շաբաթ օրը ժամ 'ի  
հասանք Զմիւռին քաղաք , ծովածոցին  
բերանը կը տեսնուի արքունի բերդը ,

որ կռի եէնի գալէ , ուր զիտեղւած են  
թնթանթներ և կ'ծածանի Օսմանեան  
դրոշմ : Աստի կըսկսին երեւիլ ամբողջ  
քաղաքը , և նորա վերի կողմը լեռան  
վերայ հին թատրոնի մի մնացորդներն ,  
նաւահանգիստը գեռ չմտաց , խարիս-  
խի վերայ տեսանք Անգղիոյ Գաղղիոյ  
Աւստրիոյ և Իտալիոյ զղահաւոր պա-  
տերազմական նաւեր , նաւահանգստի  
ընկերութեան կողմէն որոշեալ հրամա-  
նատարի մը առաջնորդութեամբ մը-  
տանք նաւահանգիստը , ուստի քաղա-  
քին ամբողջ տեսարանը կերելի , որոյ  
չքեղութիւն տուած են հոյակապ և  
գմբէթաւոր եկեղեցիներն և մզկիթ-  
ներն , և նոցա մերձ բարձր և ճարտա-  
րաչէն աշտարակներն եւ զանգակա-  
տուններն և այլ երեւելի շինուածներն ,  
և քաղաքին հարաւային կողմը կը տես-  
նուին ուղղաձիգ նոճիներ որոնք այ-  
լազգեսց գերեզմանատեղին կ'զարդա-  
րեն , նաւահանգիստը շինել յանձն  
տուած է Գաղիացի ընկերութիւն մի  
քսան տարի պայմանաւ և այնուհետեւ  
պիտի յանձնուի Օսմանեան Պետու-  
թեան , քաղաքին կողմէն ծովը լեցու-  
նելով բաւական յառաջած է , և լե-  
ցուած տեղը խանութներ և այլ հաս-  
տատութիւններ շինուելէն զինի , պատ-  
րաստած է նաեւ ընդարձակ ճանա-  
պարհ մեծամեծ քարերով սալած , յու-  
րոյ վերայ երկաթուղոյ գծեր հաս-  
տատուած են մինչև մաքսը , ապա նա-  
ւահանգստին շրջապատը ծովը մէջէն  
տմուր և հաստատուն պատ քաշուած  
է մի միայն գուռ մի թողլով նաւե-  
րուն ել և մըտիցը համար : Այս նա-  
ւահանգիստէն նաւերը մորիկներէ ա-  
պահով լինելէն զինի , այնպիսի դիւրին  
կերպով կ'օժոնան ցամաքը , որ առանց  
նաւակի ճանապարհորդները և բեռ-  
ները շոգենաւէն ուղղակի ցամաքը կը  
փոխադրեն : (Նարանակէլ)



# ՖԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Անցեալ ամսոյ վերջերս տեղւոյս հասարակութիւնը գնաց 'ի Պէրու-թի և անտի 'ի Գամասիոս . չը գիտցուի թէ 'ի ինչ պատճառ ունի Կառավարչի այս ուղեւորութիւնը :

— Ամոցս՝ Կառավարութեան Գուռը յանձնաժողով մի կողմուեցաւ ընդ նախագահութեամբ Պէրու-թի Պէլէտիյէի Ժողովուրդ Նախագահին . կան այս յանձնաժողովին մէջ և քրիստոնեայ անդամներ կըսուի թէ սորա պաշտօննէ կառավարչի գործոց բնութիւնը :

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

## ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆՈՐԱՏԱՐԱԿԱՆ

Գ. Ս. ԹԱՊԱՅԵԱՆ

ՅՈՒԹՅՆ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ

Այս գտագիրքը պատրաստուած է Ազգ. Իսկոյանց համար պարզ լեզուաւ և գիւրդմբռնելի եղանակաւ . կը բաղկանայ 245 երեսէ . ունի երեք տախտակ ձեւերու և կը վաճառուի 'ի գին 8 զլուշ մարուր ստակ :

Գտագիրքին պարունակութեան և ընթացքին վերայ աւելի ամփոփ գաղտփար մի տալու համար , յառաջութեան կը գնեմք սատ :

ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ , որ կ'ուսուցանէ զլուսաբարձ մեր մարդկային գրութեան կազմութիւնը և կը բացատրէ այն օրէնքները , որով այս երկնային մարմինները , ընդ որս և մեր երկիրը իրենց մղողակ , կը կառավարուին , կարեւոր ուսումնական միւն է : Հարկ չեմք տեսնել այս ահլ ընդարձակութեն թուել անոր օգուտները և կարեւորութիւնը բաւական է գիտնալ , որ այս ուսումը ներկայ դարու սկիզբէն յառաջագիտական մեծամեծ քայլեր առաւ . տիեզերախօսական շատ ճշմարտութիւններ պարզուեցան , բազմութիւ և օգտակար գիտութիւններ , այս ամենը՝ ունի ուսման կարեւորութեան ապացոյցներ են : Մարդը , որ առաջ զինքը ջրօտ պատաղ երկնային երեւոյթներուն անտեղեակ էր , և շատ անգամ բնական երեւոյթ մի շատ ազգեր տգիտութեան պատճառաւ մեծ արհուրանաց մէջ կը չգէր , այսօր շարժիւ այս ուսման գիտէ և կը

մեկնէ այդ երեւոյթներուն պատճառը , գիտէ Ժ. լորակոյին գրութիւնը կազմող մարմնոց բնական և տարարանական կազմութիւնը , գիտէ անոնց շարժումներն և շարժմանց տիրող օրէնքները և գիտէ վերջապէս նոցա իւրաքանչիւրին հեռաւորութիւնը և մեծութիւնը : Ահաւասիկ համառօտիւ Տիեզերագրութեան օգուտները :

Գիտութիւն մի , երբ բաց 'ի շոր աւ ցումնք ծած , նոթութիւններէ , կամ բաց 'ի մտաց զարգացումէ , չը բաւականացնէ մարդոյ սիրտը և չը լուսանէր նորա հոգին երկնային զմայլմամբ և զպիմացմամբ : 'ի կարեւորացն է , բաց ոչ 'ի կարեւորացունից . Այս համեմատութեամբ աւելի պարզ կ'որոշուի Տիեզերագրութեան միւս բնական ուսումնական ունեցած գերազանցութիւնը , վասն զի ոչ ուսումնէ աւելի արժանի մարդոյ խոկմանց , աւելի ընդունակ նորա սիրտը և հոգին լուսանելու երկիւղած զարմացմամբ և կրօնական սուրբ զգացմամբ , քան հրաշակաւոց տիեզերաց , քան ուսումն ըստաւ փիւռ աստեղաց , որ անդադար կը լուսալին մեր գիտուն վերայ : 'ի մի բան քան ուսումն երկնից , որ ըստ Մարգարէին Պատմին ցփաւս Աստուծոյ եւ ցարարան ձեռաց նորա :

Այսու համայնմամբ կը յուսամք թէ մեր ներկայ աշխատութեամբ ելէն ոչ առաջին , քան աւելի կարեւոր և օգտակար գործ մի նուիրելոյնք ուսումնական Հայ—ժանկարոյն : Թեեւ մեզմէ շատ առաջ այդ փութացած են այս ծառայութեան մէջ , սակայն մեր գլխաւոր ջանքն էրած է աւելի նորոգոյն և կարեւորացոյն ծանօթութիւններով ծախացել եւ կանոնաւոր ու բնական կարգաւ մի՝ ուսմանը գիւրաւաւորել ընել : Այս նպատակաւ՝ ուսման նիւթին համեմատ վեց զուտներու բաժնեյինք , առաջին՝ երկիրը , որ մեզ ամենաբնականօրէն և մեր բնակութեան տեղին է . երկրորդ՝ Հաստատուն տատնք , երրորդ՝ Արեգակն , չորրորդ՝ Լուսինը , հինգերորդ՝ Մոռնակային դրութիւն . վեցերորդ՝ Տոմար , և ամենէն վերջ՝ քսան և մէկ խնդիրներ յաւելցուցինք ուսանողաց կրթութեան համար նոյն իսկ գտագիրքէն քաղուած , որ ուսանողք առանց արաւետական փառնոյ իրեն թաւարանական խնդիրներ պիտի լուծեն , Ամենէն աւելի խնդրոց լուծումը պիտի երաշխաւորէ ուսանողաց վեճակը վստահ զի կրնաւ ուսման բուն ոգոյն չեն լուսանցած , անպատճառ պիտի տկարանան խնդրոց լուծման մէջ : Առ այդ կը խնդրեմք , որ ուսուցիչք առաջնորդ են ուսանողաց , գտագիրքին մէջ շատ տեղեր միայն թիւեր գրուած են առանց մանրամասն հաշիւ իւրեւ վերջական արդիւնք , պէտք է որ ուսանողք ինքնին փորձեն գործողութեամբ անոնց ստուգութիւնը :

Որչափ որ մեր այս գործը զանազան թերութիւններէ զերծ չէ , սակայն կը յուսամք , որ Մեծարգոյ Ուսուցիչք պիտի ընդգուշեն ներդրումս օգուտ և համակրութեամբ , որով ելիմք Հայ—ժանկարոյն անպակաս ինչ օգտի . մեք՝ մեր աշխատութեան վարձն ու պրակը լիովն ստացած կ'ըլլամք :





# Մ Ա Հ Ա Ր Ձ Ա Ն

## Ա Ր Ա Մ Ա Յ Ն Ե Ր Ս Ի Ս Ե Ա Ն

Ո Ր Ի Ծ Ա Ղ Ի Կ Հ Ա Ս Ա Կ Ի Ն Ն Ջ Ե Ա Ց Ի Տ Է Ր

Ներսիսեան Մեծապատիւ Գրիգոր Էֆէնտի Արամ անուն փոքր որդին ՚ի Փարիզ, ուր ուսման կը պարապէր, հիւանդութեան մի ենթարկուելով չորս տարի յառաջ Պօլիս իւր ծնողաց քով կը վերադառնայ. ուրկէ եւս բժշկաց խորհրդով վերջին օրերո յԵփեսոսս կ'ուղարկուի ընկերակցութեամբ մօր եղբօրն Մեծ. Յարութիւն Աղայի եւ մօրաքեռն Համեստափայլ Հռիփսիմէ տիկնոջ, սակայն ոչ այնքան ծախսերն ոչ իւր մօրեղբօր եւ մօրաքեռն տքնաջան հոգատարութիւնը օգուտ մի չընելով վերջապէս ամսոյս 7 ին իւր 20 ամեայ ծաղիկ հասակին մէջ մահկանացուն կը կնքէ ՚ի մեծ ցաւ եւ տրամաւթիւն որդեսէր ծնողաց: Բարեպաշտ ծնողքը, որք կը փափագին եղեր յետ առողջութեան իրենց որդւոյն, գալ յուստ եւ երկրպագութիւն, եւ այցելել նոյնպէս այն նուիրական դամբանին, ուր կը հանգչի բա-


րեյիշատակ Ներսէս աղայն Մեծ. Գրիգոր Էֆէնտի հայրը, հեռագրիւ փափաք կը յոցոնեն, որ ննջեցելոյն նշխարքը տանին յԵրուսաղէմ եւ անդ ամիս փոն Ներսէս աղայի քով. ուստի ըստ փափագանայն նոցա ամսոյս 23 ին ուղղակի Ս. Աթոռս բերուելով՝ եւ գիշերն Եկեղեցին մնալով հեռեւեալ առաւօտուն յատկապէս Սուրբ Պատարագ մատուցաւ եւ ապա հանգիստոր յուղարկաւ որութեամբ ամիս փեցաւ ննջեցելոյն մարմնը Ս. Փրկչայ գերեզմանատան մէջ իւր Հաւուն, բարեյիշատակ Ներսէս աղային ծոյր: Ամեն Ս. Պատրիարքը սրտառուչ դամբանական մի խօսեցաւ. գովեց նորա հաւուն բարեպաշտութիւնը, որ իւր վերջին տարինեքուն մէջ ՚ի Ս. Երաւ սողէմ գալով յուստ եւ յերկրպագութիւն, աստ մեռած եւ թաղուած է. գովեց նոյնպէս հօրը ընտիր ընտիր բարեմասնութիւնները, ողորմածասի-



րութիւնը , մարդասիրութիւնն և ազ-  
գասիրութիւնը , որոց չնորհիւ չափե-  
լին թէ՛ գաղտնի և թէ՛ յայտնի միւի-  
թարուած եւ սիրտիւած են : Հան-  
գուցելոյն բարեպաշտ գերդաստանի  
այս Աստուածահաճոյ բարեմասնու-  
թիւնները գովելէն զինի ցաւակցեցաւ  
ճաղկահասակ ննջեցելոյն տարածամ  
մահուան վերայ , յորմէ ապագային  
մէջ անշուշտ բազում առաքինական  
գործեր կ'ակնկալուէին իբրեւ հաւա-  
տարիմ ժառանգ իւր բարեպաշտ գեր-  
դաստանին , սակայն անողորմ մահուան  
անգութ խորշակը խամբելով սոյն նո-  
րածիկ վարդն իւր կոկոնին մէջ՝ վշտով  
եւ դառնութեամբ լեցուց ոչ միայն  
նորա որդեսէր ծնողաց սիրտը այլ եւ  
ամեն անոնց , որք զինքը կը ճանաչէին :

Արդարեւ դառն է մահուան պը-

տուղը . դառն է ծնողաց համար իրենց  
սիրասուն սրդիէն բաժանումը , որդ-  
ւոց համար՝ իրենց ծնողքէն զրկուիլը .  
եղբարց , բերց և ամեն բարեկամաց  
համար հոգեհատոր եղբօր մը , ան-  
գին բարեկամի մը կորուստը . բայց  
պէտք է Աստուծոյ օրհնեալ կամքը  
բաղդրացնէ այս դառնութիւնը , պէտք  
է ամեն մահկանացու խոնարհի այս  
պաշտելի կամաց առջեւ : Աշխարհ ի-  
րական կենաց ստուերն է . հանդեր-  
ձեալ աշխարհին հաւատը կ'ուսուցա-  
նէ մեզ , որ մահը յաւիտենական կե-  
նաց նախագուռն է : Այս հաւատով  
եւ այս յուսով երկնից միսիթարու-  
թիւնը կը մաղթեմք ննջեցելոյն աղէ-  
խորով ծնողաց , վշտաբեկ սուղեկցոյ  
և ամեն ազգականաց ու բարեկամաց  
համար :





## ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ընտրութիւն ընթերցանութեան մէջ . . . . .	25-29
Յերբ կաա յիքուն Տէր մեր Տէր . . . . .	29-30
Տարեկան հարցոքննութիւնք, Պարգեւաբաշխութեան հանդէս եւ ձառ . . . . .	30-33
Մարդ. — Կենդանական յատկութիւն մարմնոյ . (Շարունակելի) . . . . .	34-38
Կենսագրութիւն Շիլլերի. (Շար. և վերջ) . . . . .	38-44
Ուղեւորութիւն Յ. Ս. Էջմիածին. (Շարունակելի) . . . . .	44-47
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . . . . .	-48
Նոր հրատարակութիւն . . . . .	-48

## ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սխեր ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս  
ուլթածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիկ, Ճանապարհի ծախքով  
միասին, կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տետրակ առնել աւելից պէտք է ամեն մէկ տետրին շուրս գա-  
հեկան վճարէ :